ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2019
02.2019
03.2019
04.2019
05.2019
06.2019
07.2019
08.2019
09.2019
10.2019
Հոկտեմբեր
11.2019
12.2019

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 26-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2019

Հոկտեմբեր

թիվ 10 (254)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն գրանցելու և լիցենզավորելու, «ԱՐԱՆԳԵԼ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ին տրամադրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «ԱՅԹԻԷՖ» ՍՊԸ-ին վճարահաշվարկային կազմակերպության (դրամական (փողային) փոխանցումների իրականացման) լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Վարկս էյ էմ» ՈՒՎԿ ՓԲԸ «Ապարան», «Գավառ» և «Սևան» մասնաճյուղերը, «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «Վայոց Ձոր» ներկայացուցչությունը, «Արարատբանկ» ԲԲԸ «Գյումրի» 1/1 մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ «ԱՋԱՓՆՅԱԿ», «ԱՐԱԲԿԻՐ», «ԳՈՐԻՍ», «ՋԵՅԹՈՒՆ», «ԷՐԵԲՈՒՆԻ», «ՄԱԼԱԹԻԱ», «ՄԱՐՏՈՒՆԻ», «ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ», «ՆՈՐ ՆՈՐՔ» և «ՇԵՆԳԱՎԻԹ» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 5 փոխանակման կետի, 1 վարկային կազմակերպության նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 167Լ որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 135-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 136-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 142-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 147-Ն որոշումը «2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 148-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 149-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

29 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 150-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 151-Ն և ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 590-Ն համատեղ որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 152-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

45 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 153-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 154-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

48 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 155-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

51 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 156-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

53 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 157-Ն և ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 591-Ն համատեղ որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 328-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1030-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

58 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 158-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

60 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 159-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»

61 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 160-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

63 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 161-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

65 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 162-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի օգոստոսի 4-ի թիվ 176-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

69 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 163-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2019 թվականի երրորդ եռամսյակ)»

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել ու լիցենզավորվել*** է «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 143Ա):
- *Ուժը կորցրած է* ***ճանաչվել*** «ԱՐԱՆԳԵԼ ՊՐՈՎԱՅԴԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված լիցենզիան (որոշում թիվ 144Ա):
- «ԱՅԹԻԷՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վճարահաշվարկային կազմակերպության (դրամական (փողային) փոխանցումների իրականացման) ***լիցենզիա է տրամադրվել*** (որոշում թիվ 146Ա):
- ***Գրանցվել են*** «Վարկս էյ էմ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Ապարան», «Գավառ», «Սևան» մասնաճյուղերը, «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վայոց Ձոր» ներկայացուցչությունը, «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության «Գյումրի» 1/1 մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/723Ա, 1/752Ա, 1/755Ա, 1/765Ա):
- ***Թույլատրվել է*** «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ «ԱԶԱՓՆՅԱԿ», «ԱՐԱԲԿԻՐ», «ԳՈՐԻՍ», «ՋԵՅԹՈՒՆ», «ԷՐԵԲՈՒՆԻ», «ՄԱԼԱԹԻԱ», «ՄԱՐՏՈՒՆԻ», «ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ», «ՆՈՐ ՆՈՐՔ» և «ՇԵՆԳԱՎԻԹ» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/730Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 30000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/737Ա), 5 փոխանակման կետի, 1 վարկային կազմակերպության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/738Ա, 1/747Ա, 1/767Ա, 1/798Ա, 1/799Ա, 1/814Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2019 թ. հոկտեմբերի 29-ի թիվ 167Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 7.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.0%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարելավել վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկը և այն համապատասխանեցնել միջազգային չափանիշներին,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 20-րդ հոդվածների դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի ««Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 16.1.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.1.1. ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայերի (այսուհետ՝ սովորական բաժնետոմս) անվանական արժեքից՝ գումարած սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամուտը և նվազեցրած զեղչը,»,

2) Կանոնակարգի 16.1.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.1.3. չբաշխված շահույթ: Ընդ որում, վարկային կազմակերպության չբաշխված շահույթը վարկային կազմակերպության հիմնական կապիտալի հաշվարկում ներառվում է ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերի և հավելված 4-ի բոլոր պահանջներին բավարարող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքների՝ գումարած բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ, առավելագույնը 150 տոկոսի չափով,»,

3) Կանոնակարգը 16.1.3 կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1.4 կետով.

«16.1.4. սույն կանոնակարգի հավելված 4-ի բոլոր պահանջներին բավարարող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեք՝ գումարած արտոնյալ բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսերը նվազեցվում են սույն կանոնակարգի հավելված 4-ի բոլոր պահանջներին բավարարող այն արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք հետ են գնվել վարկային կազմակերպության կողմից (եթե արդեն իսկ չեն նվազեցվում հիմնական կապիտալից կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն) կամ ձեռք են բերվել այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում վարկային կազմակերպությունը հանդիսանում է նշանակալից մասնակից, կամ որոնք վարկային կազմակերպությունը որևէ իրավաբանական փաստաթղթի հիման վրա պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել (բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի) հետագայում: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսերը վարկային կազմակերպության հիմնական կապիտալի հաշվարկում ներառվում են սույն կանոնակարգի 16.1.1 - 16.1.3 կետերում նշված տարրերի հանրագումարի և սույն կանոնակարգի 16.2-րդ կետի համաձայն կատարվող պակասեցումների տարբերության առավելագույնը 20 տոկոսի չափով:»,

4) Կանոնակարգի 16.2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.2.1. Վարկային կազմակերպության կողմից տրամադրված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով: Ընդ որում, սույն պարբերության իմաստով՝ երկարաժամկետ ստորադաս փոխառություն է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այն ստորադաս փոխառությունը, որը տրամադրվել է առնվազն հինգ տարի ժամկետով:»,

---

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. սեպտեմբերի 26-ին (ՀՀՊՏ N25 (661), 15.10.2019):

5) Կանոնակարգի 16.2.8.1 կետը ուժը կորցրած ճանաչել,
6) Կանոնակարգը 16.3.4 կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.3.5 և 16.3.6 կետերով.

«16.3.5. Սույն կանոնակարգի հավելված 4-ի բոլոր պահանջներին բավարարող արտոնյալ բաժնետոմսերից (հիմնական կապիտալի հաշվարկում ընդգրկված մեծությունը գերազանցող գումարի չափով), որոնք լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվում են անվանական արժեքով՝ գումարած արտոնյալ բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ: Ընդ որում, վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառման առումով սույն կետում նշված գումարն ունի առաջնահերթություն, լրացուցիչ կապիտալի այլ տարրերի նկատմամբ:

16.3.6. Վարկային կազմակերպության կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններից: Սույն կանոնակարգի իմաստով (բացառությամբ՝ սույն կանոնակարգի 16.2.1-րդ կետի 1-ին ենթակետի) երկարաժամկետ ստորադաս փոխառություն է համարվում այն փոխառությունը, որը բավարարում է սույն կանոնակարգի 5-րդ հավելվածի բոլոր պայմաններին միաժամանակ: Ընդ որում, վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառման առումով երկարաժամկետ ստորադաս փոխառություններն ունեն առաջնահերթություն՝ լրացուցիչ կապիտալի այլ տարրերի նկատմամբ, բացառությամբ արտոնյալ բաժնետոմսերի: Ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, սկսած դրանց մարման ժամկետի սկզբին նախորդող հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 1-ից, լրացուցիչ կապիտալի հաշվարկից պետք է նվազեցվեն դրանց սկզբնական ընդհանուր գումարի քսան տոկոսի չափով:»,
7) Կանոնակարգը լրացնել Հավելված 4-ով և Հավելված 5-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի.

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 135-Ն որոշմամբ

«Հավելված 4
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2002 թվականի նոյեմբերի 5-ի
թիվ 347-Ն որոշման

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Արտոնյալ բաժնետոմսն ընդգրկվում է վարկային կազմակերպության հիմնական կապիտալի հաշվարկում, եթե բավարարում է հետևյալ պայմաններին միաժամանակ.

1) այն ամբողջությամբ վճարված է և օրենքով սահմանված կարգով հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում է կանոնադրական հիմնադրամի «Արտոնյալ բաժնետոմսեր» հաշվում.
2) վարկային կազմակերպության լուծարման դեպքում արտոնյալ բաժնետիրոջ պահանջները (այդ թվում՝ շահութաբաժինների գծով) ենթակա են բավարարման վարկային կազմակերպության մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո, բացառությամբ սովորական բաժնետերերի պահանջների.
3) ապահովված չէ վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, և (կամ) արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը տնտեսապես և (կամ) իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը, կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ, ենթակա է բավարարման ավելի շուտ, քան վարկային կազմակերպության լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ՝ վարկային կազմակերպության հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ.

4) թողարկված է անժամկետ.
5) արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի վարկային կազմակերպության տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը կամ վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը, ընդ որում՝
   ա. շահութաբաժնի լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,
   բ. վարկային կազմակերպության և արտոնյալ բաժնետիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում վարկային կազմակերպության համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում արտոնյալ բաժնետիրոջը, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել արտոնյալ բաժնետոմսին հասանելիք շահութաբաժինը.
6) տվյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինները ենթակա են վճարման միայն վարկային կազմակերպության զուտ շահույթից և (կամ) դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից, ընդ որում, շահութաբաժինները վճարվում են միայն դրամական միջոցով.
7) տվյալ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժնի չափը չի կարող կախվածության մեջ դրվել վարկային կազմակերպության վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ արտոնյալ բաժնետոմսերի գծով նախկինում վճարված շահութաբաժինների փաստացի մեծությունից.
8) վարկային կազմակերպությունն անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ բաժնետոմսերի ձեռքբերումը.
9) առկա չէ համաձայնություն (որոշում, պայմանագիր, համաձայնագիր), որով արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք կունենա որևէ սահմանափակում կամ խոչընդոտ նախատեսել վարկային կազմակերպության կողմից լրացուցիչ սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերի հետագա թողարկման կամ նոր ստորադաս փոխառությունների ներգրավման համար.
10) ցանկացած իրավաբանական փաստաթղթով (բացառությամբ՝ վարկային կազմակերպության կանոնադրության), որով կարգավորվում են վարկային կազմակերպության և արտոնյալ բաժնետիրոջ միջև արտոնյալ բաժնետոմսի հետ կապված հարաբերությունները, սահմանված է, որ սույն հավելվածով սահմանված պահանջները (պայմանները) փոփոխվելու դեպքում, այդ փոփոխությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի նախնական համաձայնությանը, առանց որի փոփոխությունները պարտադիր իրավական ուժ չունեն (կողմերի համար չեն առաջացնում իրավական հետևանքներ):

Հավելված 5
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2002 թվականի նոյեմբերի 5-ի
թիվ 347-Ն որոշման

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Երկարաժամկետ ստորադաս փոխառությունը (այսուհետ նաև՝ փոխառություն) ընդգրկվում է վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալի հաշվարկում, եթե փոխառությունը (փոխառության պայմանագիրը) բավարարում է հետևյալ պայմաններին միաժամանակ.

1) Փոխառությունը չի տրամադրվել վարկային կազմակերպության հանդեպ ունեցած որոշակի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով:
2) Փոխառությունը ներգրավված է Հայաստանի Հանրապետության դրամով կամ առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով:
3) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում փոխատուի պահանջները (այդ թվում՝ տոկոսների գծով) ենթակա են բավարարման վարկային կազմակերպության մյուս բոլոր պարտատերերի պահանջները բավարարվելուց հետո:
4) Փոխառությունն ապահովված չէ վարկային կազմակերպության և (կամ) վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, և (կամ) փոխատուն տնտեսապես և (կամ) իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը ենթակա է բավարարման ավելի շուտ, քան վարկային կազմակերպության լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում, փոխատուի պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) փոխատուի՝ վարկային կազմակերպության հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ:
5) Փոխառությունը տրամադրվել է առնվազն 5 տարի ժամկետով: Ընդ որում, փոխառության պայմանագրով փոխառության մայր գումարի մարում կարող է նախատեսվել միայն փոխառության գումարի լրիվ մարման վերջնաժամկետին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում, իսկ փոխառության պայմանագրի երկարաձգման դեպքում՝ երկարաձգված ամբողջական մարման վերջնաժամկետին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում (բացառությամբ՝ սույն Հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով փոխառության ամբողջ գումարի վաղաժամկետ մարման դեպքերի):
6) Փոխառության պայմանագիրը չի պարունակում այնպիսի դրույթներ (խթաններ), որոնք տնտեսապես կամ այլ կերպ կարող են ստիպել (խթանել) վարկային կազմակերպությանը ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակիորեն մարել փոխառության գումարը: Սույն հավելվածի 1-ին կետի 17-րդ ենթակետով սահմանված փոխառության՝ բաժնետոմսերի փոխարկվելու դրույթը չի համարվում սույն ենթակետի իմաստով խթան:
7) Փոխառությունը (մայր գումարը և տոկոսները) ժամկետից շուտ մարման ենթակա չէ, բացառությամբ՝
   ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
   բ. եթե ժամկետից շուտ մարման դեպքում փոխառության ամբողջ գումարն ուղղվում է վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի համալրմանը (սույն կանոնակարգի 16.1-րդ կետի համաձայն հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի տեսքով),
   գ. եթե փոխառությունը ժամկետից շուտ մարվում է վարկային կազմակերպության նախաձեռնությամբ, և եթե պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.
   գ1. փոխառությունը ժամկետից շուտ մարելու նպատակով վարկային կազմակերպությունը ստացել է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը,
   գ2. փոխառության ժամկետից շուտ մարման ամսաթվի և փոխառության ստացման ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի:
8) Սույն հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված նախնական համաձայնությունը ստանալու նպատակով վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ստորադաս փոխառությունը վաղաժամկետ մարելու նպատակահարմարությունը և դրա արդյունքում անցանկալի հետևանքներ չառաջանալը հիմնավորող տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը: Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնա-

կան համաձայնության տրամադրման կամ մերժման վերաբերյալ, որի մասին ծանուցում է վարկային կազմակերպությանը 30-օրյա ժամկետի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու և (կամ) վարկային կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ, ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել Կենտրոնական բանկի որոշմամբ: Կենտրոնական բանկը սույն հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված նախնական համաձայնությունը տրամադրում է, եթե՝

ա. վարկային կազմակերպությունը փոխարինում է ստորադաս փոխառությունը սույն հավելվածի պահանջներին բավարարող մեկ այլ երկարաժամկետ ստորադաս փոխառությամբ կամ սույն կանոնակարգի 4-րդ հավելվածի պահանջներին բավարարող արտոնյալ բաժնետոմսերով, և այդ փոխարինումը բացասաբար չի անդրադառնա վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վրա, կամ

բ. վարկային կազմակերպությունը հիմնավորում է, որ իր նորմատիվային կապիտալի մակարդակը, առանց սույն կետում նշված ստորադաս փոխառության, բավարար չափով բարձր է, և նոր կապիտալի գործիքով փոխարինելու անհրաժեշտությունը բացակայում է:

9) Պայմանագրի համաձայն՝ փոխառությունը (մայր գումարը կամ տոկոսները) ենթակա չէ մարման վարկային կազմակերպության կողմից, եթե փոխառության գումարի և (կամ) դրա գծով տոկոսների մարումը վճարման օրվա դրությամբ կհանգեցնի վարկային կազմակերպության տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը: Ընդ որում, վարկային կազմակերպության և փոխատուի միջև որևէ պայմանագրով կամ վարկային կազմակերպության ներքին կամ անհատական իրավական ակտով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում վարկային կազմակերպության համար փոխառության գումարի և (կամ) դրա գծով տոկոսների ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունք տրամադրել փոխատուին, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է վարկային կազմակերպության կողմից թողարկված բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը և (կամ) վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող այլ ստորադաս փոխառությունների գծով վճարումների իրականացմանը:

10) Սույն հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետում նշված դեպքում փոխառության մայր գումարի և (կամ) տոկոսների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում վարկային կազմակերպության կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում:

11) Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների մեծությունը չի կարող կախվածության մեջ դրվել վարկային կազմակերպության վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ փոխառության գծով կատարված մայր գումարի և (կամ) տոկոսների փաստացի վճարումների մակարդակից: Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների չափը չի կարող նվազել այն դեպքում, երբ փոխառության գծով սահմանված վճարումները վարկային կազմակերպությունը կատարում է ամբողջությամբ և ժամանակին:

12) Որևէ իրավաբանական փաստաթղթով սահմանված չէ փոխատուի համար իրավունք՝ ժամկետից շուտ պահանջելու փոխառության գումարը միայն այն հիմքով, որ վարկային կազմակերպությունը պատշաճ կերպով չի կատարել այլ պարտավորությունների գծով իր ստանձնած պարտավորությունները:

13) Փոխառությունը չի տրամադրվել այնպիսի իրավաբանական անձի կողմից, որում վարկային կազմակերպությունը հանդիսանում է նշանակալից մասնակից, և (կամ) վարկային կազմակերպությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ փոխառության ներգրավումը:

14) Որևէ իրավաբանական փաստաթղթով սահմանված չէ, որ փոխատուն կարող է որևէ կերպ սահմանափակել կամ խոչընդոտել վարկային կազմակերպությանն այլ փոխատուներից նոր փոխառությունների ներգրավման հարցում:

15) Փոխառության գծով վճարվող գումարների վճարման ժամանակացույցը հստակ նշված է փոխառության պայմանագրում:

16) Այն դեպքում, երբ փոխառության գումարը վարկային կազմակերպությանը տրամադրվում է փուլերով (տրանշերով), ապա լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվելու նպատակով յուրաքանչյուր այդպիսի փուլ (տրանշ) պետք է բավարարի սույն հավելվածով սահմանված բոլոր պայմաններին, այդ թվում՝ յուրաքանչյուր փուլ պետք է տրամադրվի առնվազն 5 տարի ժամկետով:

17) Փոխառության պայմանագրով նախատեսված է, որ վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում փոխառությունը մարվում է փոխառության համապատասխան

գումարի չափով վարկային կազմակերպության կողմից, իսկ փոխատուն պարտավորվում է մարված փոխառության գումարն անհապաղ ուղղել վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի համալրմանը (այսուհետ՝ փոխարկում)՝ սույն կանոնակարգի 16.1-րդ կետի համաձայն հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի տեսքով: Ընդ որում, սույն ենթակետի իմաստով՝ փոխառության համապատասխան գումար է համարվում այն գումարը, որը, Կենտրոնական բանկի կարծիքով, անհրաժեշտ է վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար, սակայն ոչ ավելի, քան այն առավելագույն գումարը, որով փոխառությունը սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված իրավիճակն ի հայտ գալուն նախորդող 120 օրվա ընթացքում ներառվել է վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի հաշվարկում: Եթե փոխառությունը ներգրավված է առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով, ապա վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

18) Փոխառության պայմանագրով հստակ սահմանվում է այն հարաբերակցությունը, ըստ որի՝ սույն հավելվածի 1-ին կետի 17-րդ ենթակետով սահմանված փոխարկումն իրականացնելու նպատակով փոխառությունը պետք է փոխարկվի հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի:

19) Փոխառության պայմանագրով սահմանվում է, որ փոխառության պայմանագրի փոփոխության և (կամ) լուծելու դեպքում անհրաժեշտ է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, առանց որի պայմանագրի ցանկացած փոփոխությունը և (կամ) լուծումը պարտադիր իրավական ուժ չունեն (կողմերի համար չեն առաջացնում իրավական հետևանքներ):

2. Սույն կանոնակարգի իմաստով՝ ֆինանսական վիճակի վատթարացում է համարվում հետևյալ իրավիճակներից որևէ մեկի ի հայտ գալը.

1) ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը նվազում է
   ա) 2.5 տոկոսից խնայողական միությունների դեպքում,
   բ) 6.5 տոկոսից վարկային միությունների դեպքում,
   գ) 8.5 տոկոսից լիզինգային կազմակերպությունների դեպքում,
   դ) 10.5 տոկոսից Ֆակտորինգային կազմակերպությունների, ունիվերսալ վարկային կազմակերպությունների և վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների դեպքում,
2) Կենտրոնական բանկը գրավոր կերպով տեղեկացնում է վարկային կազմակերպությանն այն մասին, որ կապիտալի գործիքի դուրսգրումը կամ փոխարկումը հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի՝ անհրաժեշտ է, քանի որ առանց դրա վարկային կազմակերպության մոտ կառաջանան (հնարավոր է, որ առաջանան) օրենքով սահմանված անվճարունակության կամ սնանկության հիմքեր,

3. Այն դեպքերում, երբ փոխառության ներգրավման արդյունքում տվյալ փոխատուից ներգրավված ստորադաս փոխառության արժեքը կգերազանցի վարկային կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 տոկոսը, կամ փոխատուի՝ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած ձայնի իրավունք տվող մասնակցության և վարկային կազմակերպությանը տրամադրած փոխառության հանրագումարը կգերազանցի վարկային կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 տոկոսը, ապա նախքան փոխառության գումարը (կամ դրա մի մասը) վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկելը, փոխատուն պետք է ստանա վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 13-ի համաձայն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
4 հոկտեմբերի 2019 թ., N 135-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հաշվի առնելով Կենտրոնական դեպոզիտարիայի՝ որպես ներդրումային ֆոնդի պահառուի գործունեություն իրականացնելու իրավասությունը,

նպատակ ունենալով ապահովել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներդրումային ֆոնդի ակտիվների պահառության գործառույթի ամբողջական և արդյունավետ իրականացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 175-րդ հոդվածի 3-րդ մասը, 176-րդ հոդվածի 2-րդ մասը, 177-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 199-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը հաստատելու մասին» թիվ 242-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ի 4-րդ կետի 6-րդ ենթակետը «վերջնահաշվարկի,» բառից հետո լրացնել «ներդրումային ֆոնդի ակտիվների պահառության գործառույթի իրականացման (այդ թվում՝ ֆոնդի հաշվին կատարվող վճարների, պարգևավճարների վճարման),» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
4 հոկտեմբերի 2019 թ., N 136-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. սեպտեմբերի 26-ին (ՀՀՊՏ N 25 (661), 15.10.2019):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Առաջնորդվելով ֆինանսական կայունության ապահովման՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նպատակով,

նպատակ ունենալով ապահովել նախադրյալներ արտարժութային իրացվելիության բուֆերների ստեղծման համար,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «դ» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի 50-րդ կետի մեջ բոլոր «4%» և «14%» բառերը փոխարինել համապատասխանաբար «6%» և «12%» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջում հրապարակմանը հաջորդող օրվանից: Ընդ որում՝ սույն որոշման 1-ին ենթակետով սահմանված կարգավորումները վերաբերում են 2019 թվականի հոկտեմբերի 9-ից սկսվող փաստացի պահուստավորման ժամանակահատվածներին և վերջիններիս համար հիմք հանդիսացող հաշվետու ժամանակահատվածներին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
7 հոկտեմբերի 2019 թ., N 142-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 7-ին (ՀՀՊՏ N 25 (661), 15.10.2019):

*2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 29-ի թիվ 71 Ա որոշմամբ հաստատված արծաթե ներդրումային դրամների թողարկման ծրագիրը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

2019 թվականի նոյեմբերի 11-ից շրջանառության մեջ դնել 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

1. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման Հավելվածում (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 147-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի հոկտեմբերի 11-ի
թիվ 147-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2020»: Աջ կողմում տեղադրված են «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀԳՏ N 26 (662), 01.11.2019):

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18 +/- 0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2020»: Աջ կողմում տեղադրված են «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66 +/- 0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2020»: Աջ կողմում տեղադրված են «1 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 +/- 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8.000.000 հատ

6) 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





4. 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2020»: Աջ կողմում տեղադրված են «5 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	60,15 +/- 0,5
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





5. 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2020»: Աջ կողմում տեղադրված են «10 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	10 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	75,50 +/- 0,7
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





6. 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2020»: Աջ կողմում տեղադրված են «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	100,00 +/- 0,9
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





7. 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2020»: Աջ կողմում տեղադրված են «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	20 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	149,62 +/- 1,2
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 50.000 հատ

6) 2020 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարելավել բանկերի կողմից ռիսկերի կառավարման և գնահատման ընթացքում սթրես-թեստավորման գործընթացը և հստակեցնել սթրես-թեստերի նկատմամբ պահանջները, բարելավել և համակարգված դարձնել ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում բանկի կողմից իրականացվող միջոցառումները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իբ» ենթակետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 20-րդ հոդվածների դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի ««Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) Կանոնակարգ 4-ի 6-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գլուխ 6. Սթրես-թեստավորում

70. Սթրես-թեստավորման համակարգը կազմում է բանկի ռիսկերի կառավարման գործընթացի մի մասը: Բանկն իրականացնում է սթրես-թեստավորում, որպես ռիսկերի գնահատման հիմնական մեթոդ կամ, առնվազն որպես զուգահեռ մեթոդ՝ ի լրումն ռիսկերի գնահատման վիճակագրական, էկոնոմետրիկ և կանխատեսող մոդելների:

71. Սթրես թեստավորման արդյունքները ունեն կիրառական նշանակություն: Մասնավորապես՝ սթրես-թեստերն օգտագործվում են բանկի ռիսկի ախորժակը (առանձին ռիսկերի և դրանց բաղադրիչների գծով սահմանաչափերը) սահմանելու համար, իսկ քանակական սահմանաչափեր նախատեսված չլինելու դեպքում սթրես-թեստերի արդյունքներով կայացվում են հստակ որոշումներ կա՛մ ռիսկն ընդունելու, կա՛մ ռիսկը (ազդեցությունը) նվազեցնելու անհրաժեշտության վերաբերյալ: Սթրես-թեստերի արդյունքները կիրառվում են նաև երկարաժամկետ գործարար ծրագրերի կազմման, վերականգնման ծրագրերի մշակման, ինչպես նաև կապիտալի և իրացվելիության պլանավորման ժամանակ:

72. Բանկի խորհուրդը պատասխանատու է սթրես-թեստավորման արդյունավետ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման, իսկ գործադիր մարմինը՝ սթրես-թեստերի հետևողական իրականացման համար, մասնավորապես բանկի խորհուրդը և գործադիր մարմինը համոզվում են, որ սթրես-թեստերը պարբերաբար վերանայվում են, կիրառվող ենթադրություններն ու պայմանները համարժեք են:

73. Բանկն իրականացնում է՝

1) միագործոն սթրես-թեստեր՝ զգայունության վերլուծություններ, որոնց նպատակն առանձին կամ սահմանափակ թվով ռիսկի գործոնների փոփոխությունների ազդեցության գնահատումն է բանկի կամ առանձին պորտֆելի վրա՝ առանց այլ գործոնների ազդեցությունը հաշվի առնելու,
2) սցենարային սթրես-թեստեր, որոնց նպատակը մի շարք ռիսկի գործոնների փոփոխությունների ազդեցության գնահատումն է բանկի կամ առանձին պորտֆելի վրա, որի դեպքում հաշվի են առնվում տարբեր ռիսկային գործոնների, այդ թվում՝ համակարգային, փոխազդեցության արդյունքները,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N 26 (662), 01.11.2019):

3) հակադարձ սթրես-թեստեր, որոնց նպատակն է գնահատել և բացահայտել այն սցենարները կամ ռիսկի գործոնները, որոնց դեպքում առաջանում է որպես մուտքային գործոն կիրառված հավանական կորուստը: Ընդ որում, մուտքային գործոնը որոշվում է բանկի կողմից՝ իր պորտֆելին, գործունեության մասշտաբին, բարդությանը և ռիսկայնությանը համապատասխան:

73.1. Սթրես-թեստերը ներառում են՝

1) բանկին հատուկ սթրես-ցուցանիշներ,
2) ֆինանսական շուկայի սթրես-ցուցանիշներ,
3) համախմբված՝ մակրոտնտեսական սթրես-ցուցանիշներ:

73.2. Բանկն իրականացնում է սթրես-թեստավորում բոլոր էական ռիսկերի գծով, որոնք ներառում են առնվազն հետևյալ ռիսկերը.

1) վարկային ռիսկ,
2) իրացվելիության ռիսկ,
3) գործառնական ռիսկ (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված),
4) շուկայական ռիսկ՝ ըստ առանձին բաղադրիչների, մասնավորապես՝
   ա. արտարժութային ռիսկ,
   բ. բանկային պորտֆելում տոկոսադրույքի ռիսկ,
   գ. առևտրային պորտֆելում շուկայական ռիսկ,
   դ. գնային ռիսկ, եթե գնային ռիսկ պարունակող ակտիվների հանրագումարը գերազանցում է բանկի ընդհանուր հաշվեկշռային ակտիվների 3 տոկոսը,
5) վարակի ռիսկ (այլ բանկի/ֆինանսական կազմակերպության ֆինանսական խնդիրների հնարավոր բացասական ազդեցությունը տվյալ բանկի կապիտալի և (կամ) շահույթի վրա),
6) երկրի ռիսկ:

74. Դիտարկվող սցենարները ապահովում են ռիսկի համապարփակ գնահատում և համապատասխանում են բանկի բարդությանն ու ռիսկայնությանը, մասնավորապես.

1) սցենարները ապագային միտված են, ծայրահեղ, բայց հավանական,
2) սցենարները կառուցվում են՝ ելնելով թե՛ հիփոթեզային, թե՛ պատմականորեն դիտարկված սթրեսային իրավիճակներից (հաշվի առնելով նաև շուկայում տեղի ունեցած վերջին սթրեսը): Հիփոթեզային սցենարների կիրառությունն անհրաժեշտ է, մասնավորապես, այն դեպքերում, երբ որևէ ռիսկի (պորտֆելի, պրոդուկտի, այդ թվում՝ նոր ներդրվող) գծով չի դիտարկվել սթրեսային իրավիճակ կամ բանկի վրա ազդող ռիսկի գործոնների գծով էական շոկերը փաստացի դիտարկվել են տարբեր ժամանակահատվածներում, սակայն հավանական է նաև դրանց միաժամանակյա տեղի ունենալը,
3) սցենարները մշակվում են բավարար մանրամասնեցված՝ ըստ ռիսկի գործոնների, ինչպես նաև ըստ պորտֆելների, արժույթների, պրոդուկտների՝ համարժեք բանկի բարդությանն ու ռիսկայնությանը:

75. Իրականացվող սթրես-թեստերի ժամանակային հորիզոնը և սցենարը համապատասխանում են ԿՀԳՆԳ-ի ժամանակային հորիզոնին և արդյունքներին: Ընդ որում, սթրես-թեստերն իրականացվում են առնվազն առաջիկա 12-ամսյա ժամանակային հորիզոնով:

76. Սթրես-թեստավորումն իրականացվում է՝ հիմք ընդունելով բանկի կանխատեսումների վրա հիմնված հիմնական (բազային) սցենարը, որը ենթարկվում է շոկային ցնցումների՝ արտացոլելով ծայրահեղ, բայց հավանական իրավիճակների առնվազն երկու մակարդակներ (միջին և խիստ):

77. Եթե բանկի կողմից որոշակի ռիսկի գծով սթրես-թեստավորման գործընթացում դիտարկվող իրավիճակը կարող է ազդեցություն ունենալ բանկի գործունեությանն առնչվող այլ ռիսկերի վրա, ապա բանկը գնահատում է ինչպես յուրաքանչյուր ռիսկի գծով ազդեցություններն առանձին-առանձին, այնպես էլ համընդհանուր ազդեցությունը:

78. Վարկային, գործառնական, բանկային պորտֆելում տոկոսադրույքի, գնային, վարակի և երկրի ռիսկերի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է առնվազն եռամսյակային կտրվածքով, իսկ իրացվելիության, արտարժութային և առևտրային պորտֆելում շուկայական ռիսկերի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է առնվազն ամսական կտրվածքով: Բանկային պորտֆելում տոկոսադրույքի ռիսկի գծով սթրես-թեստավորումը, այդ թվում՝ վարքագծային գործոնների/պարամետրերի գնահատումը (գնահատման թարմացումը) կարող է իրականացվել տարեկան պարբերականությամբ, եթե հիմնավորվում է, որ ռիսկի գնահատման տեսանկյունից բանկի հաշվեկշռի կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

79. Բանկը պարբերաբար (առնվազն տարեկան մեկ անգամ) վերանայում է սթրես-թեստերը, մասնավորապես իրականացնում է՝

1) սթրես-թեստավորման գործընթացի արդյունավետության և ըստ նպատակի կիրառելիության գնահատում,
2) սթրես սցենարների, այդ թվում՝ սցենարներում դիտարկված ռիսկի գործոնների ցանկի վերանայում,
3) բանկի ֆինանսական ցուցանիշների վրա սթրեսի ազդեցությունը գնահատող մոդելների, դրանց հիմքում ընկած ենթադրությունների արդիականության, որակական և քանակական հիմնավորումների համապատասխանության գնահատում և անհրաժեշտության դեպքում՝ վերանայում:

80. Բանկերն ապահովում են սթրես-թեստավորման գործընթացի ներքին կանոնակարգում, մասնավորապես.

1) բանկի ներքին իրավական ակտերով առնվազն սահմանվում են՝

ա. իրականացվող սթրես-թեստերի տեսակները (զգայունության, սցենարային կամ հակադարձ) և նպատակը,

բ. սթրես-թեստի սցենարի ընտրության սկզբունքները, ներառյալ նաև հիմնավորում սցենարի ծայրահեղ, բայց հավանական լինելու վերաբերյալ,

գ. ֆինանսական ցուցանիշների վրա ռիսկի գործոնների ազդեցությունը գնահատելու նպատակով կիրառվող մոդելների (ներառյալ ֆինանսական գործիքների գնագոյացման, վարքագծային գործոնների գնահատման) մեթոդաբանությունը,

դ. մոդելի վալիդացիայի գործընթացը և սկզբունքները,

ե. ժամանակային հորիզոնի ընտրության մեթոդաբանությունը,

զ. սթրես-թեստավորման գործընթացի վերանայման ընթացակարգը,

է. գործընթացի հիմնական պատասխանատուները,

ը. սթրես-թեստերի արդյունքների կիրառման եղանակները կառավարչական որոշումների կայացման, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացներում,

թ. սթրես-թեստերի արդյունքները որոշում կայացնողներին, շահագրգիռ ստորաբաժանումներին հասանելի դարձնելու և Կենտրոնական բանկին տրամադրելու ընթացակարգերը:

2) սթրես-թեստերի հիմքում ընկած հիմնական ենթադրությունները, հիմնական սցենարները, սթրես-թեստերի ազդեցության գնահատման համար օգտագործվող հիմնական դատողությունները փաստաթղթավորվում են և շրջանառվում գործընթացի համար պատասխանատու անձանց միջև:

81. Բանկն իրականացնում է ներքին միջավայրում հնարավոր սթրեսային իրավիճակների կանխարգելմանը կամ դրանց հետևանքով առաջացող հնարավոր բացասական արդյունքների նվազեցմանն ուղղված միջոցառումներ:»:

2) Կանոնակարգ 4-ը 6-րդ գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ գլխով.

«Գլուխ 6.1. Վերականգնման ծրագիր

81.1 Բանկը պետք է ունենա ֆինանսական վիճակի էական վատթարացման դեպքում ֆինանսական վիճակի բարելավմանն ուղղված վերականգնման ծրագիր (այսուհետ՝ վերականգնման ծրագիր): Վերականգնման ծրագիրը պետք է համահունչ լինի բանկի գործունեության առանձնահատկություններին, բնորոշ ռիսկերի բնույթին, չափին և բարդությանը:

81.2 Վերականգնման ծրագիրը առնվազն պետք է ներառի՝

1) հավանական սցենարների նկարագրություն, որոնց տեղի ունենալու դեպքում բանկի ֆինանսական վիճակը էապես կվատթարանա,
2) հավանական սցենարների ազդեցությունը բանկի գործունեության հիմնական ուղղությունների, ոլորտների վրա,
3) նպատակային սահմանաչափեր/ցուցանիշներ, որը (որոնք) խախտելու դեպքում բանկը կկիրառի վերականգնման ծրագրով սահմանված միջոցառումները,
4) հավանական սցենարների տեղի ունենալու դեպքում բանկի կողմից ֆինանսական վիճակի վերականգնմանն ուղղված միջոցառումների նկարագրությունը:

81.3 Վերականգնման ծրագրում նկարագրված սցենարները.

1) վերականգնման ծրագրում ներառվող սցենարները պետք է լինեն ապագային միտված, ծայրահեղ, բայց հավանական և արտացոլեն հավանական սցենարների առնվազն երկու մակարդակ (միջին և խիստ),
2) վերականգնման ծրագրում պետք է ներառվեն առնվազն՝

ա. երկու սցենար, որոնք, տեղի ունենալու դեպքում, բացասական ազդեցություն կունենան կոնկրետ տվյալ բանկի վրա,
բ. երկու սցենար, որոնք, տեղի ունենալու դեպքում, բացասական ազդեցություն կունենան ամբողջ ֆինանսական համակարգի և/կամ տնտեսության վրա, որն իր հերթին բացասական ազդեցություն կունենա բանկի վրա,
գ. երկու սցենար, որոնք կհամադրի վերոնշյալ երկու սցենարների տեղի ունենալը,

3) նկարագրված սցենարները պետք է արտացոլեն այն իրադարձությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ բանկի վրա՝ հաշվի առնելով բանկի ռիսկերի կառուցվածքը, գործունեության բնույթը, չափը, բանկային համակարգի մնացած մասնակիցների հետ փոխկապակցվածության աստիճանը և այլն:

81.4 Վերականգնման ծրագրում ներկայացվում է բանկի գործունեության հիմնական ուղղությունների, ոլորտների նկարագրությունը, ինչպես նաև վերականգնման ծրագրում նկարագրված սցենարների տեղի ունենալու դեպքում վերջիններիս վրա դրանց ազդեցությունը:

81.5 Նպատակային սահմանաչափերի/ցուցանիշների սահմանումը.

1) վերականգնման ծրագրով պետք է հստակ սահմանվեն նպատակային սահմանաչափեր/ցուցանիշներ, որոնք խախտելու դեպքում բանկը կկիրառի վերականգնման ծրագրով նախատեսված միջոցառումները,
2) նպատակային սահմանաչափերը/ցուցանիշները պետք է լինեն և քանակական, և որակական, որոնք կարտացոլեն բանկի ֆինանսական դրությունը, և հնարավոր կլինի դրանց նկատմամբ մոնիտորինգ իրականացնել,
3) նպատակային սահմանաչափերը/ցուցանիշները պետք է առնվազն վերաբերեն բանկի՝
ա. կապիտալին,
բ. իրացվելիությանը,
գ. եկամտաբերությանը,
դ. ակտիվների որակին,
4) վերականգնման ծրագիրը պետք է ներառի նաև ֆինանսական շուկայի իրավիճակը արտացոլող նպատակային սահմանաչափեր/ցուցանիշներ, և մակրոտնտեսական նպատակային սահմանաչափեր/ցուցանիշներ:

81.6 Ֆինանսական վիճակի վերականգնմանն ուղղված միջոցառումները.

1) վերականգնման ծրագիրը պետք է ներառի վերականգնման ծրագրում նկարագրված սցենարներ տեղի ունենալու և (կամ) նպատակային սահմանաչափերի խախտման դեպքում բանկի կողմից իրականացվող միջոցառումների նկարագրությունը, իրականացման հաջորդականությունն ու իրականացման համար պահանջվող ողջամիտ ժամկետները, վերականգնմանն ուղղված միջոցառումների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների/աշխատակիցների շրջանակը, ինչպես նաև վերջիններիս միջև արդյունավետ հաղորդակցության իրականացման գործընթացների նկարագրությունը,
2) վերականգնման ծրագրում պետք է բացահայտել վերականգնման ծրագրով սահմանված յուրաքանչյուր միջոցառման իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը,
3) վերականգնման ծրագիրը հաստատվում է Բանկի խորհրդի կողմից,
4) վերականգնման ծրագիրը պետք է վերանայվի առնվազն տարին մեկ անգամ, կամ ավելի հաճախ այն դեպքում, երբ փոխվում են, օրինակ, բանկի կազմակերպական կառուցվածքը, իրականացվող գործառնությունները, ստանձնած ռիսկերի մակարդակը, ռազմավարությունը, տեղի է ունենում ֆինանսական վիճակի փոփոխություն, եթե վերջիններս կարող են էական ազդեցություն ունենալ վերականգնման ծրագրով սահմանված միջոցառումների վրա,
5) բանկերը պետք է պարբերաբար ուսումնասիրեն արտաքին (էկզոգեն) և ներքին (էնդոգեն) գործոնները, որոնք կարող են ազդել բանկի գործունեության վրա և իրենց վերականգնման ծրագիրը համապատասխանեցնեն տեղի ունեցած փոփոխություններին,
6) բանկը վերականգնման ծրագիրը ներկայացնում է Կենտրոնական բանկ տարեկան պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը, ինչպես նաև յուրաքանչյուր փոփոխություն իրականացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,
7) վերականգնման ծրագրով սահմանված միջոցառումները առնվազն տարեկան կտրվածքով փորձարկվում են՝ պարզելու համար դրանց արդյունավետությունը, և անհրաժեշտության դեպքում թարմացվում են: Փորձարկման արդյունքները պետք է փաստաթղթավորվեն բանկի կողմից և ներկայացվեն ՀՀ կենտրոնական բանկ մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 15-ը:»:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից, և 1-ին կետի 2-րդ ենթակետը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 148-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել բանկերի ռիսկերի կառավարման և կապիտալի պլանավորման գործընթացների նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող մշտադիտարկման և վերահսկողության արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 20-րդ հոդվածների դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետի աղյուսակը 34-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 35-րդ տողով.

«

35	Հաշվետվություն կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի վերաբերյալ	39	եռամսյակային

»,

2) Կանոնակարգի 3-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Բանկերը սույն Կանոնակարգի 2-րդ կետով սահմանված հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները ներկայացնում են էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-էՅ-նեթ համակարգի միջոցով (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան, բացառությամբ Թիվ 34 (Հաշվետվություն սթրես-թեստերի վերաբերյալ) և Թիվ 39 (Հաշվետվություն կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի վերաբերյալ) հաշվետվությունների, որոնք ներկայացվում են ազատ ոճով՝ «էքս էլ էս» ձևաչափի ֆայլերով, ընդ որում՝ հարակից բացատրական և մեթոդական տեղեկատվությունը կարող է ներկայացվել «դոք» կամ «դոքիքս» ձևաչափի ֆայլերով, և Թիվ 35 հաշվետվության, որը ներկայացվում է «դոք» կամ «դոքիքս» ձևաչափի ֆայլերով:»,

3) Կանոնակարգի 7-րդ կետի երկրորդ նախադասությունը «հազար դրամներով» բառերից հետո լրացնել «(բացառությամբ վերջին տողի, որտեղ արտարժույթով պահուստավորման ենթակա միջոցները լրացվում են համապատասխան արտարժութային արտահայտությամբ)» բառերով,

4) Կանոնակարգի 33-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«33. Թիվ 34 հաշվետվությունը (Հաշվետվություն սթրես-թեստերի վերաբերյալ) ներկայացվում է ազատ ոճով, ընդ որում հաշվետվությամբ ներկայացվող սթրես-թեստերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի պահանջներին: Առանձին ռիսկերի գծով ամսական կտրվածքով իրականացվող սթրես-թեստերը Թիվ 34 հաշվետվության մեջ ներկայացվում են հաշվետու եռամսյակի բոլոր ամիսների համար առանձին: Թիվ 34 հաշվետվության մեջ պետք է առնվազն ներկայացված լինեն սթրես-թեստի հստակ և հակիրճ մեթոդաբանությունը, հիմքում ընկած ենթադրությունները, բանկի կանխատեսումների վրա հիմնված հիմնական (բազային) սցենարը, կիրառվող մոդելը, մոդելի վալիդացիան և սթրես-թեստի արդյունքները, եթե դրանք չեն ներկայացվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ բանկի ներքին իրավական ակտերի տեսքով:»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N 26 (662), 01.11.2019):

5) Կանոնակարգը 33.4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 33.5 կետով.

«33.5. Թիվ 39 հաշվետվությունը (Հաշվետվություն կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի վերաբերյալ) ներկայացվում է ազատ ոճով, ընդ որում՝ հաշվետվությամբ ներկայացվող Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացը պետք է համապատասխանի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի պահանջներին, և պետք է առնվազն ներառի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի (այսուհետ՝ ԿՀԳՆԳ) իրականացման ժամանակային հորիզոնը, հաշվարկման մեթոդաբանությունը (ներառյալ ԿՀԳՆԳ-ի իրականացման հիմքում ընկած ենթադրությունները) և արդյունքները, եթե դրանք չեն ներկայացվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ բանկի ներքին իրավական ակտերի տեսքով:»,

6) Կանոնակարգի 34-րդ կետի առաջին նախադասության մեջ «և ձև թիվ 34 հաշվետվության» բառերը փոխարինել «, ձև թիվ 34 և ձև թիվ 39 հաշվետվությունների» բառերով,
7) Կանոնակարգի 34-րդ կետի վերջին նախադասության մեջ «Ձև թիվ 34 հաշվետվության» բառերը փոխարինել «Ձև թիվ 34 և ձև թիվ 39 հաշվետվությունների» բառերով,
8) Կանոնակարգի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ» ձև թիվ 4 հաշվետվության առաջին էջը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ և 8-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 149-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 149-Ն որոշմամբ

«Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի
թիվ 50-Ն որոշմամբ

Ձև թիվ 4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____

Ամսաթիվ	Ռեզիդենտներից ներգրավված միջոցներ				Ոչ ռեզիդենտներից ներգրավված միջոցներ								0% դրույքաչափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ				Ամրողջական դրույքաչափի մեկ ութերորդի չափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ			
					Ընդամենը				Այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերից											
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	17.1	17.2	17.3	17.4
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
Միջինը	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	x	0	0	0
Ենթակա է պահուստավորման, արտահայտված դրամով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	x	x	x	x	x	0	0	0
Ենթակա է պահուստավորման, արտահայտված համապատասխան արտարժույթով	x	0	0	0	x	0	0	0	x	0	0	0	x	x	x	x	x	x	x	x

(հազ դրամ)

Ամբողջական դրույքաչափի մեկ չորրորդի չափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ				Ամբողջական դրույքաչափի մեկ երկրորդի չափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ				Ընդամենը ներգրավված միջոցներ				Վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները				Խոցելի ՀՀ դրամով միջոցների կեշտոտվածության վիճակով պահուստավորվող միջոցների գումարը	Խոցելի ԱՄՆ դոլարով միջոցների կեշտոտվածության վիճակով պահուստավորվող միջոցների գումարը	Խոցելի եվրոյով միջոցների կեշտոտվածության վիճակով պահուստավորվող միջոցների գումարը	Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման, բացառությամբ ԿԲ-ից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ			
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	Այլ արտարժույթ				ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	Այլ արտարժույթ
18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x				x				0	0	0	0											
x	0	0	0	x	0	0	0	0	0	0	0	x	x	x	x	0	0	0	0	0	0	0
x	0	0	0	x	0	0	0	0	0	0	0	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
x	x	x	x	x	x	x	x	x	0	0	0	x	x	x	x	x	x	x	x	x	x	x

Բանկի վարչության նախագահ _____

Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*

Գլխավոր հաշվապահ _____

Պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված (զրոյական) դրույքաչափով ընդգրկվող ներգրավված միջոցներ

(հազ դրամ)

Ներգրավված միջոցի նույնականացման ներքին համարը	Պարտատիրոջ անվանումը	Ներգրավված միջոցի տեսակը	Ներգրավված միջոցի պայմանագրային գումարը (մնացորդը)	Ներգրավված միջոցի պայմանագրային տոկոսադրույքը	Ցածր (զրոյական) դրույքաչափով ընդգրկվող գումարը	Արժույթը	Մարման ժամկետը	Պահուստավորման դրույքը	Ցածր (զրոյական) դրույքաչափով ընդգրկման ժամանակահատվածը	
									Սկիզբ	Ավարտ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Բանկի վարչության նախագահ ______________________
Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*

Գլխավոր հաշվապահ ______________________

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ը հաստատելու մասին» թիվ 301-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 12-րդ բաժնում 12921-րդ տողից հետո «12902» թիվը փոխարինել «12922» թվով,
2) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 13-րդ բաժնում 13821-րդ տողից հետո «13802» թիվը փոխարինել «13822» թվով,
3) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 19-րդ բաժնում 190-րդ ենթաբաժինը 19002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	1901	*Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*	
		19010	*Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*

»,

4) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 19-րդ բաժնում «19252» թիվը փոխարինել «1925» թվով,
5) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 20-րդ բաժնում 2020-րդ տողի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	2020	Ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
		20200	Ասոցիացված բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20201	Ասոցիացված վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20202	Ասոցիացված ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20203	Ասոցիացված ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20204	Ասոցիացված այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20205	Ասոցիացված այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

»,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀԳՏ N29 (665)[1], 02.12.2019):

6) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 21-րդ բաժնում.

ա. բաժնի 21006-րդ, 21015-րդ և 21026-րդ տողերում «Ֆինանսական վարձակալությամբ ստացված» բառերը փոխարինել «Գործառնական վարձակալությամբ տրված» բառերով,

բ. բաժինը 21125-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 212-րդ ենթաբաժնով.

«

212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)		
	2120	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)	
		21200	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հողամասեր)
		21201	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ շենքեր, շինություններ)
		21202	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ)
		21203	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա)
		21204	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ փոխադրամիջոցներ)
		21205	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ)
	2121	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն	
		21210	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված մաշվածություն
		21211	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված մաշվածություն
		21212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված մաշվածություն
		21213	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված մաշվածություն
		21214	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն
	2122	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում	
		21220	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հողամասեր) կուտակված արժեզրկում
		21221	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված արժեզրկում
		21222	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված արժեզրկում
		21223	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված արժեզրկում
		21224	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված արժեզրկում
		21225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում

»,

7) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 22-րդ բաժինը 22410-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 225-րդ ենթաբաժնով.

«

225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)		
	2250	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)	
		22500	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային ծրագրեր)
		22501	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ)
	2251	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա	
		22510	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված ամորտիզացիա
		22511	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա
	2252	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում	
		22520	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված արժեզրկում
		22521	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում

»,

8) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 23-րդ բաժնում.

ա. 230-րդ ենթաբաժինը 23002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23003	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

բ. 230-րդ ենթաբաժինը 23012-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23013	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

գ. 231-րդ ենթաբաժինը 23102-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23103	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

դ. 231-րդ ենթաբաժինը 23112-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23113	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

9) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 24-րդ բաժնում 242-րդ ենթաբաժնի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

242	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)		
	2420	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)	
		24200	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ)
		24201	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)

»,

10) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 38-րդ բաժնում.

ա. 380-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

380	Վարձակալության գծով պարտավորություններ		
	3800	Վարձակալության գծով պարտավորություններ	
		38000	Բանկերի նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38001	Վարկային կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38002	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38003	Այլ անձանց նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
	3801	Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ	
		38010	Բանկերի նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38011	Վարկային կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38012	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38013	Այլ անձանց նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ

»,

բ. հանել 381-րդ, 3810-րդ, 38100-րդ, 38101-րդ, 38102-րդ, 38103-րդ տողերը,

11) Կանոնակարգի Թիվ 1 հաշվետվության 86-րդ բաժնում 861-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

861	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ կամ վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ		
	8610	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ	
		86100	*Փոխադրամիջոցներ և սարքավորումներ*
		86101	*Այլ հիմնական միջոցներ*
		86102	*Այլ ակտիվներ*
	8611	*Վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ*	
		86110	*Փոխադրամիջոցներ և սարքավորումներ*
		86111	*Այլ հիմնական միջոցներ*
		86112	*Այլ ակտիվներ*

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 150-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառումը համապատասխանեցնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին,

հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը որոշում են.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի օգոստոսի 27-ի թիվ 629-Ն, 2004 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 993-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 840-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1032-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանում» (այսուհետ՝ Հաշվային պլան) և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգում» (այսուհետ՝ Հրահանգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Հաշվային պլանի 12-րդ բաժնում 12921-րդ տողից հետո «12902» թիվը փոխարինել «12922» թվով,
2) Հաշվային պլանի 13-րդ բաժնում 13821-րդ տողից հետո «13802» թիվը փոխարինել «13822» թվով,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N29(665)[1], 02.12.2019):

3) Հաշվային պլանի 19-րդ բաժնում 190-րդ ենթաբաժինը 19002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	1901	Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	
		19010	Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

»,

4) Հաշվային պլանի 20-րդ բաժնում 2020-րդ տողի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	2020	Ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
		20200	Ասոցիացված բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20201	Ասոցիացված վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20202	Ասոցիացված ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20203	Ասոցիացված ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20204	Ասոցիացված այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20205	Ասոցիացված այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

»,

5) Հաշվային պլանի 21-րդ բաժնում.

ա. բաժնի 21006-րդ, 21015-րդ և 21026-րդ տողերում «Ֆինանսական վարձակալությամբ ստացված» բառերը փոխարինել «Գործառնական վարձակալությամբ տրված» բառերով,

բ. բաժինը 21125-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 212-րդ ենթաբաժնով.

«

212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)		
	2120	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)	
		21200	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հողամասեր)
		21201	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ շենքեր, շինություններ)
		21202	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ)
		21203	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա)
		21204	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ փոխադրամիջոցներ)
		21205	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ)
	2121	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն	
		21210	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված մաշվածություն
		21211	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված մաշվածություն
		21212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված մաշվածություն
		21213	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված մաշվածություն
		21214	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն
	2122	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում	
		21220	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հողամասեր) կուտակված արժեզրկում
		21221	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված արժեզրկում
		21222	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված արժեզրկում
		21223	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված արժեզրկում
		21224	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված արժեզրկում
		21225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում

»,

6) Հաշվային պլանի 22-րդ բաժինը 22410-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 225-րդ ենթաբաժնով.

«

225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)		
	2250	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)	
		22500	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային ծրագրեր)
		22501	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ)
	2251	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա	
		22510	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված ամորտիզացիա
		22511	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա
	2252	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում	
		22520	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված արժեզրկում
		22521	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում

»,

7) Հաշվային պլանի 23-րդ բաժնում.

ա. 230-րդ ենթաբաժինը 23002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23003	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

բ. 230-րդ ենթաբաժինը 23012-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23013	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

գ. 231-րդ ենթաբաժինը 23102-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23103	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

դ. 231-րդ ենթաբաժինը 23112-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23113	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

8) Հաշվային պլանի 24-րդ բաժնում 242-րդ ենթաբաժնի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

242	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)		
	2420	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)	
		24200	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ)
		24201	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)

»,

9) Հաշվային պլանի 38-րդ բաժնում.

ա. 380-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

380	Վարձակալության գծով պարտավորություններ		
	3800	Վարձակալության գծով պարտավորություններ	
		38000	Բանկերի նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38001	Վարկային կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38002	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38003	Այլ անձանց նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
	3801	Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ	
		38010	Բանկերի նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ

		38011	Վարկային կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38012	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38013	Այլ անձանց նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ

»,

բ. հաշվային պլանից հանել 381-րդ, 3810-րդ, 38100-րդ, 38101-րդ, 38102-րդ, 38103-րդ տողերը,

10) Հաշվային պլանի 61-րդ բաժինը 61817–րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 619-րդ ենթաբաժնով.

«

619	Եկամուտներ գործառնական վարձակալությունից		
	6190	Եկամուտներ գործառնական վարձակալությունից	
		61900	Եկամուտներ գործառնական վարձակալությունից

»,

11) Հաշվային պլանի 66-րդ բաժնում.

ա. 66205-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

		66206	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ
		66207	Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ

»,

բ. 66213-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		66214	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ

»,

12) Հաշվային պլանի 70-րդ բաժնում 70701-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

		70701	Տոկոսային ծախսեր վարձակալության գծով պարտավորության դիմաց

»,

13) Հաշվային պլանի 71-րդ բաժնում.

ա. 71110-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

		71110	Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախսեր

»,

բ. 71135-րդ տողի «Ֆինանսական վարձակալությամբ վարձակալած հիմնական միջոցների» բառերը փոխարինել «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ)» բառերով,

գ. 71136-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

		71136	Գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսեր

»,

դ. 71143-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«

		71144	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) ամորտիզացիայի գծով ծախսեր

»,

14) Հաշվային պլանի 72-րդ բաժնում.

ա. 72205-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«

		72206	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) արժեզրկումից առաջացած կորուստներ
		72207	Գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցների արժեզրկումից առաջացած կորուստներ

»,

բ. 72213-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 72214-րդ տող.

«

		72214	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) արժեզրկումից առաջացած կորուստներ

»,

15) Հաշվային պլանի 86-րդ բաժնում 861-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

861	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ կամ վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ		
	8610	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ	
		86100	Փոխադրամիջոցներ և սարքավորումներ
		86101	Այլ հիմնական միջոցներ
		86102	Այլ ակտիվներ
	8611	Վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ	
		86110	Փոխադրամիջոցներ և սարքավորումներ
		86111	Այլ հիմնական միջոցներ
		86112	Այլ ակտիվներ

»,

16) Հրահանգի 18-րդ բաժնում.

ա. 182-րդ ենթաբաժնի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 182
«Ֆինանսական վարձակալություն»

Ենթաբաժին 182-ը նախատեսված է տրամադրված ֆինանսական վարձակալության (լիզինգի) հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտի:

Ենթաբաժին 182-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1820 «Ֆինանսական կազմակերպություններից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», 1821 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», 1822 «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություններից», 1823 «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից»:

1-ին կարգի հաշիվ 1820
«Ֆինանսական կազմակերպություններից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ»

1-ին կարգի հաշիվ 1820-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ֆինանսական կազմակերպություններից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ, իսկ կրեդիտում՝ ֆինանսական վարձակալության մարումը:

18200 «Բանկերից ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» - հաշիվը նախատեսված է բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության (լիզինգի) գծով ստացվելիք գումարները հաշվառելու համար:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցները ֆինանսական վարձակալությամբ բանկերին տրամադրելիս՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի՝

Դտ - 18200
Կտ - ակտիվի համապատասխան հաշիվը
Կտ - 18220

Ֆինանսական վարձակալության զուտ ներդրման գումարի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությունը վերագրվում է եկամուտներին կամ ծախսերին, համապատասխանաբար՝ 66114 կամ 72114 հաշիվների միջոցով:

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության գծով լրիվ կամ մասնակի վճարում ստանալիս՝

Դտ - Դրամական միջոց
Կտ - 18200:

Ենթաբաժին 182-ի 1-ին կարգի հաշիվներ 1820-ում և 1821-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 18200-ի դեպքում:

1-ին կարգի հաշիվ 1822
«Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություններից»

1-ին կարգի հաշիվ 1822-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվները պասիվային են՝ կրեդիտում արտացոլվում են ֆինանսական կազմակերպություններից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք չվաստակած եկամուտները, իսկ դեբետում՝ եկամուտների հաշվեգրմանը զուգահեռ չվաստակած եկամուտների նվազումը:

18220 «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ բանկերից»-հաշիվը նախատեսված է բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության (լիզինգի) գծով չվաստակած եկամուտների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցները ֆինանսական վարձակալությամբ բանկերին տրամադրելիս՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի՝

Դտ - 18200

Կտ - 18220

Հաշիվը դեբետագրվում է վարձակալության գծով հաշվեգրվող եկամտի չափով

Դտ - 18220

Կտ - 607 ենթաբաժնի համապատասխան հաշիվները:

Ենթաբաժին 182-ի 1-ին կարգի հաշիվներ 1822-ում և 1823-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 18200-ի դեպքում:»,

17) Հրահանգի 19-րդ բաժնում 190-րդ ենթաբաժնի մեկնաբանություններից հանել «Ենթաբաժին 190-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1900 «Դեբիտորական պարտքերի»:» բառերը,

18) Հրահանգի 21-րդ բաժնում.

ա. 21-րդ բաժնի մեկնաբանությունների առաջին պարբերությունում «Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ» բառերից հետո լրացնել «, 212 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)»» բառերը,

բ. բաժնի 21006-րդ հաշվի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21006 «Գործառնական վարձակալությամբ տրված հիմնական միջոցներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից գործառնական վարձակալությամբ տրամադրված հիմնական միջոցների հաշվառման համար: Հաշվի հաշվառումն իրականացվում է համաձայն ՖՀՄՍ 16-ի:»,

գ. 211-րդ ենթաբաժնի մեկնաբանություններից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 212-րդ ենթաբաժին.

«Ենթաբաժին 212
«Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)»

Ենթաբաժին 212-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են օգտագործման իրավունքի ձևով այն ակտիվների, նրանց մաշվածության և արժեզրկման հաշվառման համար, որոնց հիմքում ընկած են հիմնական միջոցներ:

Ենթաբաժին 212-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 2120 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)», 2121 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն», 2122 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում»:

1-ին կարգի հաշիվ 2120
«Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)»

1-ին կարգի հաշիվ 2120-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից օգտագործման իրավունքի ձևով այն ակտիվների հաշվառման համար, որոնց հիմքում ընկած են հիմնական միջոցներ:

21200 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հողամասեր)» - հաշիվը նախատեսված է կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով այն ակտիվների հաշվառման համար, որոնց հիմքում ընկած են հողամասեր: Հաշվի հաշվառումն իրականացվում է համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Հաշիվը դեբետագրվում է հողամասի վարձակալության վերցման դեպքում՝ վարձակալության գծով, ՖՀՄՍ 16-ի համաձայն վճարման ենթակա գումարների ներկա արժեքի և ստանդարտով սահմանված օգտագործման իրավունքի արժեքի մաս կազմող այլ բաղադրիչների (ուղղակի վճարած գումարներ, ապատեղակայման և զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսեր և այլն) հաշվառման չափով.

Դտ- 21200

Կտ- ենթաբաժին 380-ի համապատասխան հաշիվ

Կտ- դրամական միջոցներ և/կամ պարտավորության համապատասխան հաշիվ:

Հաշիվը կարող է դեբետագրվել նաև վարձակալության գծով պարտավորության դրական վերաչափման դեպքում, ինչպես նաև ձևափոխման արդյունքում այն ավելացումների դեպքերում, որոնք չեն դիտվել առանձին վարձակալություն.

Դտ- 21200

Կտ- ենթաբաժին 380-ի համապատասխան հաշիվ:

Հաշիվը կարող է կրեդիտագրվել վարձակալության գծով պարտավորության բացասական վերաչափման և վարձակալության ձևափոխման դեպքում:

Դտ- ենթաբաժին 380-ի համապատասխան հաշիվ

Կտ- 21200:»,

19) Հրահանգի 22-րդ բաժնի մեկնաբանությունների առաջին պարբերությունը «224 «Գուդվիլ»» բառերից հետո լրացնել «, 225 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)»» բառերով,

20) Հրահանգի 24-րդ բաժնում.

ա. բաժնի մեկնաբանությունների առաջին պարբերության մեջ «Կապիտալ ներդրումներ կազմակերպության վարձակալված հիմնական միջոցներում» բառերը փոխարինել «Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)» բառերով,

բ. բաժնի 24200-րդ հաշվի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24200 «Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ)» - այս հաշիվը ներկայացնում է օգտագործման իրավունքի ձևով այն ակտիվների վրա կատարվող կապիտալ ներդրումների հաշվառման համար, որոնց հիմքում ընկած են հիմնական միջոցներ: Հաշվառումը իրականացվում է 24000-րդ հաշվի հաշվառման սկզբունքով:»,

21) Հրահանգի 38-րդ բաժնում.

ա. բաժնի մեկնաբանությունների առաջին պարբերության մեջ «380 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ», 381 «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր»» բառերը փոխարինել «380 «Վարձակալության գծով պարտավորություններ»» բառերով,

բ. 380-րդ ենթաբաժնի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 380
«Վարձակալության գծով պարտավորություններ»

Ենթաբաժին 380-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են այլ անձանց նկատմամբ վարձակալության գծով պարտավորությունների հաշվառման համար: Հաշվառումը իրականացվում է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտի համաձայն:

1-ին կարգի հաշիվ 3800
«Վարձակալության գծով պարտավորություններ»

38000 «Բանկերի նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ» - հաշիվը նախատեսված է բանկերին վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների վարձակալության սկզբնական ճանաչման ժամանակ՝ վարձակալության գծով վճարման ենթակա գումարների ներկա արժեքի չափով՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի.

Դտ - 2120-ի համապատասխան հաշիվ

Կտ - 38000

Հաշիվը կրեդիտագրվում է վարձակալության գծով վճարվելիք գումարների հետագա հաշվառման շրջանակներում հաշվեգրվող վճարումների չափով՝

Դտ - 70701

Կտ - 38000:

Հաշիվը կարող է կրեդիտագրվել նաև պարտավորության դրական վերաչափման դեպքում, ձևափոխման արդյունքում առաջացող ավելացումների դեպքերում, որոնք չեն դիտվել առանձին վարձակալություն, ինչպես նաև ձևափոխման արդյունքում առաջացող այլ ճշգրտումների դեպքում.

Դտ - 2120-ի համապատասխան հաշիվ

Կտ - 38000:

Հաշիվը դեբետագրվում է վարձավճարները վճարելիս՝

Դտ - 38000

Կտ - Դրամական միջոցներ»:

Հաշիվը դեբետագրվում է նաև պարտավորության բացասական վերաչափման, ինչպես նաև ձևափոխման արդյունքում առաջացող ճշգրտումների դեպքում.

Դտ - 38000

Կտ - 2120-ի համապատասխան հաշիվ:

Այն դեպքերում, երբ բացասական վերաչափման կամ վարձակալության շրջանակի նվազման արդյունքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գումարը հավասարվում է զրոյի, իսկ պարտավորության հաշվին առկա է նվազման ենթակա մնացորդ, ապա այն նվազում է ուղղակիորեն վերագրվելով եկամուտներին.

Դտ - 38000

Կտ - 66305:

1-ին կարգի հաշիվ 3801
«Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների
վարձակալության գծով պարտավորություններ»

38010 «Բանկերի նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ» - հաշիվը նախատեսված է բանկերին կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է վերը նշված միջոցների գծով հաշվեգրվող վարձակալության վճարումների չափով՝ վարձակալության ժամանակահատվածում համաչափ բաշխվածության կամ այլ համակարգված սկզբունքի հիման վրա՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի.

Դտ - 71110

Կտ - 38010:»,

գ. Հրահանգից հանել 381-րդ ենթաբաժնի մեկնաբանությունները,

22) Հրահանգի 51-րդ բաժնում.

ա. 51100 հաշվի նկարագրության մեջ

«Դտ - 51100

Կտ - Դրամական միջոցներ, 39240

Հաշիվը դեբետագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի դիմաց կատարված վճարի գումարի չափով:»

բառերը փոխարինել

«Դտ - 51100

Կտ - 50000

Հաշիվը կրեդիտագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի դիմաց կատարված վճարի գումարի չափով:

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 51100:»

բառերով,

բ. 51101 հաշվի նկարագրության մեջ

«Դտ - 51101

Կտ - Դրամական միջոցներ, 39240

Հաշիվը դեբետագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի դիմաց կատարված վճարի գումարի չափով:»

բառերը փոխարինել

«Դտ - 51101

Կտ - 50001

Հաշիվը կրեդիտագրվում է տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող պակաս վճարած գումարի դիմաց կատարված վճարի գումարի չափով

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 51101:»

բառերով,

23) Հրահանգի 61-րդ բաժնում.

ա. բաժնի մեկնաբանություններում «618 «Եկամուտներ այլ ներդրումային ծառայություններից»» բառերից հետո լրացնել «, 619 «Եկամուտներ գործառնական վարձակալությունից»» բառերը,

բ. բաժնի մեկնաբանություններում «ստացվելիք տոկոսների» բառերը փոխարինել «ստացվելիք գումարների համապատասխան» բառերով,

24) Հրահանգի 62-րդ բաժնի մեկնաբանություններում «ստացվելիք տոկոսների» բառերը փոխարինել «ստացվելիք գումարների համապատասխան» բառերով,

25) Հրահանգի 80-րդ բաժնում 802-րդ ենթաբաժնի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 802
«Ածանցյալ գործիքներ»

Ենթաբաժին 802-ը նախատեսված է արժութային, արժեթղթերի և այլ ածանցյալ գործիքների պայմանագրային արժեքի հաշվառման համար: Արժութային ածանցյալների դեպքում արտարժութային միջոցների գրանցումը կատարվում է գործարքի կնքման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով, այնուհետ իրականացվում է օրական վերագնահատում՝ պայմանավորված վերը նշված փոխարժեքի փոփոխությամբ: Սույն ենթաբաժնի հաշիվների ներքո արտացոլվող գումարները ներառում են ածանցյալ գործիքների գծով հաշվեգրված տոկոսները:»,

26) Հրահանգի 81-րդ բաժնում 814-րդ ենթաբաժինը լրացնել հետևյալ նախադասություններով.

«1-ին կարգի հաշիվ 8140-ում հաշվառվում են Կազմակերպության կողմից իր անունից կնքված ապահովագրական պայմանագրերը:

1-ին կարգի հաշիվ 8141-ում հաշվառվում են հաճախորդի կողմից իր անունից կամ Կազմակերպության կողմից հաճախորդի անունից կնքված այն ապահովագրական պայմանագրերը, համաձայն որոնց շահառուն հանդիսանում է Կազմակերպությունը:

Ենթաբաժին 814-ի բոլոր հաշիվների հաշվառումն իրականացվում է ապահովագրական պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարների չափով: Ֆրանշիզայի առկայությունը հաշվի չի առնվում:»,

27) Հրահանգի 86-րդ բաժնում 861-րդ ենթաբաժնի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 861
«Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ կամ վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ»

Ենթաբաժին 861-ը նախատեսված է կազմակերպության կողմից կարճաժամկետ վարձակալությամբ ստացված, ինչպես նաև վարձակալված փոքրարժեք ակտիվների հաշվառման համար, որոնք չեն հաշվառվում հաշվեկշռային հաշիվներում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի: Սույն ենթաբաժնում ընդգրկվող միջոցները անհրաժեշտ է հաշվառել պայմանագրով սահմանված տվյալ տարվա վարձակալության գումարի չափով: Սույն ենթաբաժնում ընդգրկվող միջոցների բարելավմանն ուղղված ներդրումները ենթակա են ծախսագրման:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 151-Ն

ՀՀ ֆինանսների նախարար Ա. Ջանջուղազյան
31 հոկտեմբերի 2019 թ., N 590-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ը համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 12-րդ բաժնում 12921-րդ տողից հետո «12902» թիվը փոխարինել «12922» թվով,
2) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 13821-րդ տողից հետո «13802» թիվը փոխարինել «13822» թվով,
3) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 19-րդ բաժնում 190-րդ ենթաբաժինը 19002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	1901	*Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*	
		19010	*Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*

»,

4) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 19-րդ բաժնում «19252» թիվը փոխարինել «1925» թվով,
5) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 20-րդ բաժնում 2020-րդ տողի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	2020	Ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
		20200	Ասոցիացված բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20201	Ասոցիացված վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20202	Ասոցիացված ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20203	Ասոցիացված ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20204	Ասոցիացված այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20205	Ասոցիացված այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

»,

6) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 21-րդ բաժնում.
   ա. բաժնի 21006-րդ, 21015-րդ և 21026-րդ տողերում «Ֆինանսական վարձակալությամբ ստացված» բառերը փոխարինել «Գործառնական վարձակալությամբ տրված» բառերով,
   բ. բաժինը 21125-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 212-րդ ենթաբաժնով.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀԳՏ N29 (665)[1], 02.12.2019):

«

212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)		
	2120	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)	
		21200	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հողամասեր)
		21201	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ շենքեր, շինություններ)
		21202	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ)
		21203	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա)
		21204	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ փոխադրամիջոցներ)
		21205	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ)
	2121	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն	
		21210	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված մաշվածություն
		21211	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված մաշվածություն
		21212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված մաշվածություն
		21213	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված մաշվածություն
		21214	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն
	2122	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում	
		21220	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հողամասեր) կուտակված արժեզրկում
		21221	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված արժեզրկում
		21222	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված արժեզրկում
		21223	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված արժեզրկում
		21224	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված արժեզրկում
		21225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում

»,

7) Կանոնակարգի Ձև թիվ 1 և Ձև թիվ 2 հաշվետվությունների 22-րդ բաժինը 22410-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 225-րդ ենթաբաժնով.

«

225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)		
	2250	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)	
		22500	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային ծրագրեր)
		22501	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ)
	2251	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա	
		22510	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված ամորտիզացիա
		22511	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա
	2252	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում	
		22520	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված արժեզրկում
		22521	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում

»,

8) Կանոնակարգի Ձև թիվ 1 և Ձև թիվ 2 հաշվետվությունների 23-րդ բաժնում.

ա. 230-րդ ենթաբաժինը 23002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23003	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

բ. 230-րդ ենթաբաժինը 23012-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23013	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

գ. 231-րդ ենթաբաժինը 23102-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23103	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

դ. 231-րդ ենթաբաժինը 23112-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23113	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

9) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 24-րդ բաժնում 242-րդ ենթաբաժնի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

242	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)		
	2420	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)	
		24200	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ)
		24201	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)

»,

10) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 38-րդ բաժնում.

ա. 380-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

380	Վարձակալության գծով պարտավորություններ		
	3800	Վարձակալության գծով պարտավորություններ	
		38000	Բանկերի նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38001	Վարկային կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38002	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38003	Այլ անձանց նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
	3801	Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ	
		38010	Բանկերի նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38011	Վարկային կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38012	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38013	Այլ անձանց նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ

»,

բ. Կանոնակարգից հանել 381-րդ, 3810-րդ, 38100-րդ, 38101-րդ, 38102-րդ, 38103-րդ տողերը,

11) Կանոնակարգի Չև թիվ 1 և Չև թիվ 2 հաշվետվությունների 86-րդ բաժնում 861-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

861	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ կամ վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ		
	8610	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ	
		86100	Փոխադրամիջոցներ և սարքավորումներ
		86101	Այլ հիմնական միջոցներ
		86102	Այլ ակտիվներ
	8611	Վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ	
		86110	Փոխադրամիջոցներ և սարքավորումներ
		86111	Այլ հիմնական միջոցներ
		86112	Այլ ակտիվներ

»:

12) Կանոնակարգի Չև թիվ 11 հաշվետվությունից հանել «Բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 152-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ներդրումային ֆոնդի կառավարիչների նորմատիվների հաշվարկման կարգը համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին՝ կապված «Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունների հետ,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ը հաստատելու մասին» թիվ 119-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ի 18-րդ կետի

ա. 1-ին ենթակետում «այդ թվում՝ շահագործումից դուրս» բառերից հետո լրացնել «ոչ նյութական ակտիվների ու օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)» բառերը,

բ. 3-րդ ենթակետում «հաշվեկշռային արժեքը՝ այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով կառավարչի սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո» բառերը փոխարինել «հաշվեկշռային արժեքի չափով՝ այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով կառավարչի սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո, ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ նյութական ակտիվներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով՝ հիմքում ընկած նյութական ակտիվները ֆոնդի կառավարման և (կամ) այլ ծառայությունների մատուցման համար չօգտագործվող ճանաչվելու օրվանից վեց ամիս հետո» բառերով,

գ. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) կառավարչի սեփականությունը հանդիսացող և ֆոնդի կառավարման և (կամ) այլ ծառայությունների մատուցման համար օգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների, այդ թվում՝ անշարժ գույքի (շենքերի և շինությունների), այլ հիմնական միջոցների, ինչպես նաև ֆոնդի կառավարման և (կամ) այլ ծառայությունների մատուցման համար օգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) արժեքի ու օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ներդրումային ծառայությունների համար օգտագործվող նյութական ակտիվներ) արժեքի՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Սույն պարբերության իմաստով՝ կառավարչի սեփականությունը հանդիսացող նյութական ակտիվի արժեքը

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N29 (665)[1], 02.12.2019):

հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի և դրա գծով կապիտալ ներդրումների հաշվարկումարին՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով, իսկ օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) արժեքը հավասար է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) և դրա գծով կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդների հանրագումարին:»,

դ. 5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 153-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին՝ կապված «Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունների հետ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ի Հավելված 2-ի 2.9-րդ ենթակետում «Ֆինանսական վարձակալության» բառերը փոխարինել «Վարձակալության» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 154-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N29 (665)[1], 02.12.2019):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ը համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 12-րդ բաժնում 12921-րդ տողից հետո «12902» թիվը փոխարինել «12922» թվով,
2) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 13-րդ բաժնում 13821-րդ տողից հետո «13802» թիվը փոխարինել «13822» թվով,
3) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 19-րդ բաժնում 190-րդ ենթաբաժինը 19002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

	1901	*Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*	
		19010	*Գործառնական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*

»,

4) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 19-րդ բաժնում «19252» թիվը փոխարինել «1925» թվով,
5) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 20-րդ բաժնում 2020-րդ տողի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	2020	Ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	
		20200	Ասոցիացված բանկերում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20201	Ասոցիացված վարկային կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20202	Ասոցիացված ներդրումային ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20203	Ասոցիացված ապահովագրական ընկերություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20204	Ասոցիացված այլ ֆինանսական կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ
		20205	Ասոցիացված այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

»,

6) Կանոնակարգի Չև 1 հաշվետվության 21-րդ բաժնում.
   ա. բաժնի 21006-րդ, 21015-րդ և 21026-րդ տողերում «Ֆինանսական վարձակալությամբ ստացված» բառերը փոխարինել «Գործառնական վարձակալությամբ տրված» բառերով,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀԳՏ N29 (665)[1], 02.12.2019):

բ. բաժինը 21125-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 212-րդ ենթաբաժնով.

«

212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)		
	2120	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)	
		21200	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հողամասեր)
		21201	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ շենքեր, շինություններ)
		21202	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ)
		21203	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա)
		21204	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ փոխադրամիջոցներ)
		21205	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ)
	2121	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն	
		21210	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված մաշվածություն
		21211	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված մաշվածություն
		21212	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված մաշվածություն
		21213	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված մաշվածություն
		21214	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված մաշվածություն
	2122	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում	
		21220	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հողամասեր) կուտակված արժեզրկում
		21221	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ շենքեր և շինություններ) կուտակված արժեզրկում
		21222	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ գույք և գրասենյակային սարքավորումներ) կուտակված արժեզրկում
		21223	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային և այլ տեխնիկա) կուտակված արժեզրկում
		21224	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ փոխադրամիջոցներ) կուտակված արժեզրկում
		21225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ հիմնական միջոցներ) կուտակված արժեզրկում

»,

7) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 22-րդ բաժինը 22410-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 225-րդ ենթաբաժնով.

«

225	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)		
	2250	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)	
		22500	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ համակարգչային ծրագրեր)
		22501	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ)
	2251	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա	
		22510	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված ամորտիզացիա
		22511	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված ամորտիզացիա
	2252	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում	
		22520	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ համակարգչային ծրագրեր) կուտակված արժեզրկում
		22521	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ այլ ոչ նյութական ակտիվներ) կուտակված արժեզրկում

»,

8) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 23-րդ բաժնում.

ա. 230-րդ ենթաբաժինը 23002-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23003	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

բ. 230-րդ ենթաբաժինը 23012-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23013	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

գ. 231-րդ ենթաբաժինը 23102-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23103	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվներ

»,

դ. 231-րդ ենթաբաժինը 23112-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

		23113	Գործառնական վարձակալության տրված ոչ ընթացիկ ակտիվների կուտակված արժեզրկում

»,

9) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 24-րդ բաժնում 242-րդ ենթաբաժնի ներքո հաշվառվող հաշիվները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

242	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)		
	2420	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ)	
		24200	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ)
		24201	Կապիտալ ներդրումներ կազմակերպության օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)

»,

10) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 38-րդ բաժնում.

ա. 380-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

380	Վարձակալության գծով պարտավորություններ		
	3800	Վարձակալության գծով պարտավորություններ	
		38000	Բանկերի նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38001	Վարկային կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38002	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
		38003	Այլ անձանց նկատմամբ վարձակալության գծով պարտավորություններ
	3801	Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ	
		38010	Բանկերի նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38011	Վարկային կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38012	Այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ
		38013	Այլ անձանց նկատմամբ կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով պարտավորություններ

»,

բ. Կանոնակարգից հանել 381-րդ, 3810-րդ, 38100-րդ, 38101-րդ, 38102-րդ, 38103-րդ տողերը,

11) Կանոնակարգի Չև թիվ 1 հաշվետվության 86-րդ բաժնում 861-րդ ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

861	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ կամ վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ		
	8610	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ	
		86100	*Փոխադրամիջոցներ և սարքավորումներ*
		86101	*Այլ հիմնական միջոցներ*
		86102	*Այլ ակտիվներ*
	8611	*Վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ*	
		86110	*Փոխադրամիջոցներ և սարքավորումներ*
		86111	*Այլ հիմնական միջոցներ*
		86112	*Այլ ակտիվներ*

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 155-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել կապիտալի համարժեքության նորմատիվի շրջանակում պահանջներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվների համար,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 16.2.3-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«16.2.3 ոչ նյութական ակտիվների (այդ թվում՝ շահագործումից դուրս ու օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) և բացառությամբ՝ վարկային կազմակերպության գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերի ու դրանց օգտագործման իրավունքների) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով,

2) Կանոնակարգի 16.2.5-րդ կետը լրացնել «ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ նյութական ակտիվներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով՝ հիմքում ընկած նյութական ակտիվը վարկային կազմակերպության գործունեության համար չօգտագործվող ճանաչվելու օրվանից վեց ամիս հետո,» բառերով,

3) Կանոնակարգի 16.2.6-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«16.2.6. վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների, այդ թվում՝ անշարժ գույքի (շենքերի և շինությունների) և այլ հիմնական միջոցների) արժեքի և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ վարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվներ) արժեքի՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Սույն ենթակետի իմաստով՝ վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող նյութական ակտիվի արժեքը հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի և դրա գծով կապիտալ ներդրումների հանրագումարին՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով, իսկ օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) արժեքը հավասար է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) և դրա գծով կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդների հանրագումարին,»,

4) Կանոնակարգի 16.2.7-րդ և 16.2.8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

5) Կանոնակարգի 23-րդ կետի՝

ա. 22-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«22. Վարկային կազմակերպության գործունեության ընթացքում օգտագործվող սեփական շենքեր և շինություններ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ շենքեր և շինություններ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ՝ հաշվեկշռային արժեքով»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀԳՏ N29 (665)[1], 02.12.2019):

բ. 30-րդ ենթակետում «ոչ նյութական ակտիվներ» բառերից հետո լրացնել «(ներառյալ՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ կամ ոչ նյութական ակտիվներ) ու դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 156-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 328-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1030-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառումը համապատասխանեցնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածը, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, և

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիս 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը որոշում են.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 314-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 328-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 793-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1030-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ում (այսուհետ՝ Հավելված 1) և Հավելված 2-ում (այսուհետ՝ Հավելված 2) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Հավելված 1-ում՝ «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան» աղյուսակի.
   ա. 200-րդ կետի 2006-րդ ենթակետում «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» բառերը փոխարինել «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)» բառերով,
   բ. 201-րդ կետի 2015-րդ ենթակետում «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների» բառերը փոխարինել «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ)» բառերով,
   գ. 202-րդ կետը լրացնել «2024 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)»» ենթակետով,
   դ. 203-րդ կետը լրացնել «2034 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) ամորտիզացիա»» ենթակետով,
   ե. 205-րդ կետի 2052 ենթակետում «վարձակալված հիմնական միջոցներում» բառը փոխարինել «օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ)» բառերով,
   զ. 205-րդ կետը լրացնել «2053 «Կապիտալ ներդրումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)»» ենթակետով,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N29 (665)[1], 02.12.2019):

է. 206-րդ կետը լրացնել «2062 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) արժեզրկում»» ենթակետով,

ը. 206-րդ կետը լրացնել «2063 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) արժեզրկում»» ենթակետով,

թ. 20-րդ բաժինը 2071 ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 208-րդ կետով.

«

	208	**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիա**
	2080	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիա
	2081	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիա

»,

ժ. 377-րդ կետի 3770 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	3770	Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարներ

»,

ժա. 430-րդ կետում, 4301-րդ և 7390-րդ ենթակետերում «Ֆինանսական վարձակալության» բառերը փոխարինել «Վարձակալության» բառով,

ժբ. 43-րդ բաժնի 431-րդ կետը և 4310-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ժգ. 540-րդ կետը լրացնել «5406 «Այլ համապարփակ եկամուտ»» ենթակետով,

ժդ. 680-րդ կետը լրացնել «6804 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ»», «6805 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ»» ենթակետերով,

ժե. 739-րդ կետը լրացնել «7391 «Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախսեր»» ենթակետով,

ժզ. 7435-րդ ենթակետում «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների» բառերը փոխարինել «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ)» բառերով,

ժէ. 7436-րդ ենթակետում «Վարձակալած հիմնական միջոցների» բառերը փոխարինել «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ)» բառերով,

ժը. 744-րդ կետը լրացնել «7444 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) ամորտիզացիոն ծախսեր»», «7445 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիոն ծախսեր»» ենթակետերով,

ժթ. 760-րդ կետը լրացնել «7604 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) արժեզրկումից կորուստներ»», «7605 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) արժեզրկումից կորուստներ»» ենթակետով,

ժժ. 802-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	802	**Կարճաժամկետ վարձակալություն կամ փոքրարժեք ակտիվների վարձակալություն**
	8020	Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ
	8021	Վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ

»,

2) Հավելված 2-ի՝

ա. 20-րդ բաժնի նկարագրությունը «ՀՀՄՍ 36» բառերից հետո լրացնել «, ՖՀՄՍ 16» բառերով,

բ. 200-րդ ենթաբաժնում՝ 2006-րդ հաշվի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2006 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)» - հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) հաշվառման համար: Հաշվի հաշվառումն իրականացվում է համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցման դեպքում՝ վարձակալության գծով, ՖՀՄՍ 16-ի համաձայն վճարման ենթակա գումարների ներկա արժեքի և ստանդար-

տով սահմանված այլ օգտագործման իրավունքի արժեքի մաս կազմող այլ բաղադրիչների (ուղղակի վճարած գումարներ, ապատեղակայանման և զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսեր, այլ) հանրագումարի չափով՝

Դտ - 2006

Կտ - 4301

Կտ - դրամական միջոցներ և/կամ պարտավորության համապատասխան հաշիվ:

Հաշիվը կարող է դեբետագրվել նաև վարձակալության գծով պարտավորության վերաչափման դեպքում, ինչպես նաև ձևափոխման արդյունքում այն ավելացումների դեպքերում, որոնք չեն դիտվել առանձին վարձակալություն.

Դտ - 2006

Կտ - 4301:

Հաշիվը կրեդիտագրվում է վարձակալության վերցված հիմնական միջոցների վարձակալին սեփականության իրավունքով անցնելու դեպքում՝

Դտ - Հիմնական միջոցներ

Կտ - 2006:

Վարձակալության գծով պարտավորության վերաչափման դեպքում.

Դտ - 4301

Կտ - 2006:»,

գ. 202-րդ ենթաբաժինը լրացնել 2024 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)» հաշվի նկարագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«2024 «Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)» - հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) հաշվառման համար: Այս հաշվի հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչպես 2006 հաշվի դեպքում է:»,

դ. 206-րդ ենթաբաժնի նկարագրության վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 206-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչպես 2060 հաշվի դեպքում է:»,

ե. 20-րդ բաժինը լրացնել ենթաբաժին 208-ով հետևյալ բովանդակությամբ.

«Ենթաբաժին 208
«Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիա»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ) կատարված կապիտալ ներդրումների ամորտիզացիայի (մաշվածքի) գումարները հաշվառելու համար: Այս ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչպես 201 ենթաբաժնի դեպքում է:»,

զ. Ենթաբաժին 377-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 377
«Այլ ընթացիկ պարտավորություններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ստացված կանխավճարների, կարճաժամկետ կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարների, վճարվելիք տույժերի, տուգանքների և այլ ընթացիկ այն պարտավորությունների հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում է պարտավորությունների աճը, իսկ դեբետում՝ դրանց մարումը:

3770 «Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարներ» - հաշիվը նախատեսված է Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է վերը նշված միջոցների գծով հաշվեգրվող վարձակալության վճարումների չափով՝ վարձակալության ժամանակահատվածում համաչափ բաշխվածության կամ այլ համակարգված սկզբունքի հիման վրա՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի.

Դտ - 7391

Կտ - 3770:»,

է. 43-րդ բաժնի նկարագրության մեջ «430 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ», 431 «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր»» բառերը փոխարինել «430 «Վարձակալության գծով վճարվելիք գումարներ»» բառերով,

ը. Ենթաբաժին 430-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 430
«Վարձակալության գծով վճարվելիք գումարներ»

Ենթաբաժին 430-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են այլ անձանց վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտի համաձայն:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների վարձակալության սկզբնական ճանաչման ժամանակ՝ վարձակալության գծով վճարման ենթակա գումարների ներկա արժեքի չափով՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի.

Դտ - 2006

Կտ - 4301:

Հաշիվը կրեդիտագրվում է վարձակալության գծով վճարվելիք գումարների հետագա հաշվառման շրջանակներում հաշվեգրվող վճարումների չափով՝

Դտ - 7390

Կտ - 4301:

Հաշիվը կարող է կրեդիտագրվել նաև պարտավորության դրական վերաչափման դեպքում, ձևափոխման արդյունքում առաջացող ավելացումների դեպքերում, որոնք չեն դիտվել առանձին վարձակալություն, ինչպես նաև ձևափոխման արդյունքում առաջացող այլ ճշգրտումների դեպքում.

Դտ - 2006

Կտ - 4301:

Հաշիվը դեբետագրվում է վարձավճարները վճարելիս՝

Դտ - 4301

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվը դեբետագրվում է նաև պարտավորության բացասական վերաչափման, ինչպես նաև ձևափոխման արդյունքում առաջացող ճշգրտումների դեպքում.

Դտ - 4301

Կտ - 2006:

Այն դեպքերում, երբ բացասական վերաչափման կամ վարձակալության շրջանակի նվազման արդյունքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գումարը հավասարվում է զրոյի, իսկ պարտավորության հաշվին առկա է նվազման ենթակա մնացորդ, ապա այն նվազում է ուղղակիորեն վերագրվելով եկամուտներին/ծախսերին.

Դտ - 4301

Կտ - 6890:»,

թ. Բաժին 54-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«5406 «Այլ համապարփակ եկամուտ» - այս հաշիվը նախատեսված է հաշվառելու համար այլ համապարփակ եկամուտները, որոնց համար սույն բաժնում նախատեսված հաշիվներ չկան:»,

ժ. Ենթաբաժին 743-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 743
«Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության հիմնական միջոցների մաշվածության ծախսերը, ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով 201 «Հիմնական միջոցների ամորտիզացիա» ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ:»,

ժա. Ենթաբաժին 744-ի նկարագրությունում «ընկերության ոչ նյութական» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով» բառերը,

ժբ. Ենթաբաժին 802-ի անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին 802
«Կարճաժամկետ վարձակալություն կամ փոքրարժեք ակտիվների վարձակալություն»

ժգ. 802-րդ ենթաբաժնի մեկնաբանությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Այս ենթաբաժինը նախատեսված է կազմակերպության կողմից կարճաժամկետ վարձակալությամբ ստացված, ինչպես նաև վարձակալված փոքրարժեք ակտիվների հաշվառման համար, որոնք չեն հաշվառվում հաշվեկշռային հաշիվներում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ՝ համաձայն ՖՀՄՍ 16-ի: Սույն ենթաբաժնում ընդգրկվող միջոցները անհրաժեշտ է հաշվառել պայմանագրով սահմանված տվյալ տարվա վարձակալության գումարի չափով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 157-Ն

ՀՀ ֆինանսների նախարար Ա. Ջանջուղազյան
31 հոկտեմբերի 2019 թ., N 591-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե», «իա» կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» Կանոնակարգ 3/04-ի թիվ 1 հաշվետվությունում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Հաշիվ 2006-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)	2	20	200	2006

2) Հաշիվ 2015-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) ամորտիզացիա	2	20	201	2015

3) Ենթաբաժին 202-ը 2023 հաշվից հետո լրացնել 2024 հաշվով հետևյալ բովանդակությամբ.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)	2	20	202	2024

4) Ենթաբաժին 202-ը 2033 հաշվից հետո լրացնել 2034 հաշվով հետևյալ բովանդակությամբ.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) ամորտիզացիա	2	20	203	2034

5) Հաշիվ 2052-ում «վարձակալված հիմնական միջոցներում» բառերը փոխարինել «օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ)» բառերով,

6) Ենթաբաժին 205-ը 2052 հաշվից հետո լրացնել 2053 հաշվով հետևյալ բովանդակությամբ.

Կապիտալ ներդրումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)	2	20	205	2053

7) Ենթաբաժին 206-ը 2061 հաշվից հետո լրացնել 2062 և 2063 հաշիվներով հետևյալ բովանդակությամբ.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) արժեզրկում	2	20	206	2062
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) արժեզրկում	2	20	206	2063

8) Բաժին 20-ը 2071 հաշվից հետո լրացնել 208-րդ ենթաբաժնով հետևյալ բովանդակությամբ.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ հիմնական միջոցներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիա	2	20	208	2080
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) կապիտալ ներդրումների ամորտիզացիա	2	20	208	2081

9) Հաշիվ 3770-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Կարճաժամկետ վարձակալության կամ փոքրարժեք ակտիվների վարձակալության գծով վճարվելիք գումարներ	3	37	377	3770

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀԳՏ N29 (665)[1], 02.12.2019):

10) Հաշիվ 4301-ում «Ֆինանսական վարձակալության» բառերը փոխարինել «Վարձակալության» բառերով,

11) Բաժին 43-ից հանել հետևյալ տողը.

Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր	4	43	431	4310

12) Հաշիվ 8020-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Կարճաժամկետ վարձակալությամբ ստացված ակտիվներ	8	80	802	8020

13) Հաշիվ 8021-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Վարձակալությամբ ստացված փոքրարժեք ակտիվներ	8	80	802	8021

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 158-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կապիտալի համարժեքության նորմատիվի շրջանակում սահմանել պահանջներ օգտագործման իրավունքով ստացված հիմնական միջոցների համար,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 17-րդ կետի՝
   ա. 5-րդ ենթակետում «սեփականությունը համարվելու յոթերորդ ամսվանից սկսած,» բառերից հետո լրացնել «ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով՝ այդ ակտիվները ապահովագրական գործունեության համար չօգտագործվող ճանաչվելու օրվանից մեկ տարի հետո,» բառերը,
   բ. 7-րդ ենթակետում «այլ հիմնական միջոցների) հաշվեկշռային արժեքի» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև ապահովագրական գործունեության համար օգտագործվող օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի» բառերը,
   գ. 8-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:
2) Կանոնակարգի հավելված 2-ում Աղյուսակ 1-ի 28-րդ կետում «Հիմնական միջոցներ» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)) ու դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 159-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N29 (665)[1], 02.12.2019):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ներդրումային ընկերությունների նորմատիվների հաշվարկման կարգը համապատասխանեցնել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում իրականացված փոփոխություններին՝ կապված «Վարձակալություն» ՖՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունների հետ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի ««Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 15-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «այդ թվում՝ շահագործումից դուրս» բառերից հետո լրացնել «ոչ նյութական ակտիվների ու օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)» բառերը,

բ. 3-րդ ենթակետում «հաշվեկշռային արժեքը՝ այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով ներդրումային ընկերության սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո» բառերը փոխարինել «հաշվեկշռային արժեքի չափով՝ այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով ներդրումային ընկերության սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո, ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ նյութական ակտիվներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով՝ հիմքում ընկած նյութական ակտիվները ներդրումային ծառայությունների մատուցման համար չօգտագործվող ճանաչվելու օրվանից վեց ամիս հետո» բառերով,

գ. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող և ներդրումային ծառայությունների համար օգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների, այդ թվում՝ անշարժ գույքի (շենքերի և շինությունների), այլ հիմնական միջոցների, ինչպես նաև ներդրումային ընկերության գործունեության համար օգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) արժեքի ու օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ներդրումային ծառայությունների համար օգտագործվող նյութական ակտիվներ) արժեքի՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Սույն պարբերության իմաստով՝ ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող նյութական ակտիվի արժեքը հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի և դրա գծով կապիտալ ներդրումների հանրագումարին՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով, իսկ օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) արժեքը հավասար է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) և դրա գծով կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդների հանրագումարին:»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N29 (665)[1], 02.12. 2019):

դ. 5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգի Հավելված 1-ում.

ա. 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

բ. Աղյուսակ 1-ի 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

28. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)) ու դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ հաշվեկշռային արժեքով	100	-

»:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ 1-ին կետի 1-ին ենթակետն ու 2-րդ ենթակետի «բ» պարբերությունն ուժի մեջ են մտնում 2020 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 160-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել կապիտալի համարժեքության նորմատիվի շրջանակում պահանջներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվների համար, լրացնել կազմակերպությունների ցանկը, որոնց կողմից տրամադրվող միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի շրջանակում ընդգրկվում են արտոնյալ դրույքաչափով,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի՝
   ա. «գ» պարբերությունում «այդ թվում՝ շահագործումից դուրս ոչ նյութական ակտիվների» բառերից հետո լրացնել «ու օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ)» բառերը,
   բ. «դ» պարբերությունում «մեկ տարի հետո» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ նյութական ակտիվներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով՝ հիմքում ընկած նյութական ակտիվները բանկային գործունեության համար չօգտագործվող ճանաչվելու օրվանից վեց ամիս հետո» բառերը,
   գ. «զ» պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.
      «զ. բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների արժեքի և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ բանկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվներ) արժեքի՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Սույն պարբերության իմաստով՝ բանկի սեփականությունը հանդիսացող նյութական ակտիվի արժեքը հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի և դրա գծով կապիտալ ներդրումների հանրագումարին՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով, իսկ օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) արժեքը հավասար է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի (հիմքում՝ նյութական ակտիվ) և դրա գծով կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդների հանրագումարին:»,
   դ. «է» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:
2) Կանոնակարգի 58-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
3) Կանոնակարգի հավելված 3-ում Աղյուսակ 1-ի 6.29-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.
   «6.29. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (հիմքում՝ հիմնական միջոցներ)) ու դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ հաշվեկշռային արժեքով»:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀԳՏ N29 (665)[1], 02.12.2019):

4) Կանոնակարգի հավելված 10-ում 1-ին կետի 9-րդ ենթակետում «կիանգեցնի բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի» բառերից հետո լրացնել «և (կամ) «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգի» համաձայն սահմանված համախմբված շեմի» բառերը:

5) Կանոնակարգի հավելված 11-ում 2-րդ և 3-րդ կետերում՝

ա. «IIV Միկրոֆայնանսֆոնդս»-ից (IIV Mikrofinanzfonds),» բառերից հետո լրացնել

««Իէֆէյ_էֆԱյդիէֆ/էսէմԻ»-ից (EFA_FIDF/SME), «Սվիս Ինվեսթմենթ Ֆանդ ֆոռ Իմերջինգ Մարկետս»-ից (Swiss Investment Fund For Emerging Markets)», ««Տրիոդոս Բանկ Յուքեյ էլԹիԴի.»-ից (Triodos Bank UK Ltd.),» բառերը,

բ. ««Ինկոֆին Սի Վի Բի էյ (Incofin CVBA)» բառերը փոխարինել ««ՍԻՎԻԷՍՕ ՍԻՎԻԲԻէյ-էՍՕ/էմէՍԻ» (CVSO CVBA-SO/MSE) (նախկինում՝ «Ինկոֆին Սի Վի Բի էյ» (Incofin CVBA))» բառերով:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերն ուժի մեջ են 2020 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
16 հոկտեմբերի 2019 թ., N 161-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի օգոստոսի 4-ի թիվ 176-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1.1 մասի 2-րդ պարբերությունը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9.1 հոդվածի 3-րդ պարբերությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իբ» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով,

հաշվի առնելով, որ գործնականում առաջանում են հաղորդակցման հետ կապված խնդիրներ հատկապես ֆիզիկական անձ երաշխավորների մոտ, և

նպատակ ունենալով կանոնակարգել ֆիզիկական անձ երաշխավորների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ գործարար վարվելակերպի կիրառման եղանակներն ու ընթացակարգերը, բարձրացնել բանկերում և վարկային կազմակերպություններում երաշխավորության ինստիտուտի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի օգոստոսի 4-ի ««Բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոնների կիրարկման եղանակների և ընթացակարգերի պահանջները» կանոնակարգ 8/06-ը հաստատելու մասին» թիվ 176-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ««ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/06-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,

2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել ««Երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոններ» կանոնակարգ 8/06-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):»,

3) Որոշմամբ հաստատված Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 4-րդ կետի:

3. Սույն որոշման Հավելվածով հաստատված կանոնակարգի 2-րդ և 8-րդ կետերը տարածվում են նաև մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված և գործող երաշխավորության պայմանագրերի վրա:

4. Սույն որոշման Հավելվածով հաստատված կանոնակարգի 12-րդ և 13-րդ կետերն ուժի մեջ են մտնում սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վաթսուներորդ օրը և տարածվում են նաև մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը կնքված և գործող երաշխավորության պայմանագրերի վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
23 հոկտեմբերի 2019 թ., N 162-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 11-ին (ՀՀՊՏ N27 (663), 06.11.2019):

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 162-Ն որոշմամբ

«Հավելված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի օգոստոսի 4-ի
թիվ 176-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/06
ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է երաշխավորների հետ բանկերի ու վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից գործարար վարվելակերպի կանոնների կիրառման եղանակների և ընթացակարգերի պահանջները:
2. Սույն կանոնակարգով նախատեսված տեղեկատվությունը և փաստաթղթերը Կազմակերպությունը երաշխավորին տրամադրում է անվճար:
3. Սույն կանոնակարգի իմաստով երաշխավոր է համարվում ֆիզիկական անձը:

2. ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

4. Կազմակերպությունները պետք է ունենան երաշխավորների հետ գործարար վարվելակերպի կանոններ, որոնց կիրառման եղանակներն ու ընթացակարգերը սահմանվում են սույն կանոնակարգին համապատասխան:
5. Երաշխավորի պահանջով Կազմակերպությունը երաշխավորին տրամադրում է սույն կանոնակարգի 4-րդ կետով նախատեսված կանոնների պատճենը:

3. ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

6. Կազմակերպությունը պետք է երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության վերաբերյալ այլ պայմանագիր (վարկային կամ այլ պրոդուկտի վերաբերյալ պայմանագիր) կնքելուց առաջ երաշխավորին ծանոթացնի երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրերի էական պայմաններին, վարկառուի (համավարկառուի, պարտապանի) կողմից իր պարտականությունը չկատարելու դեպքում երաշխավորի վարկային պատմության վատթարացման, երաշխավորի պարտավորության, դրա չափի, երաշխավորի վերաբերյալ վարկային ռեգիստր և վարկային բյուրո տեղեկատվության տրամադրման և վեճերի լուծման մեխանիզմների վերաբերյալ:
7. Կազմակերպությունը երաշխավորին տրամադրում է երաշխավորության պայմանագրի օրինակը, ինչպես նաև երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրի (այդ թվում՝ վարկի մարման ժամանակացույցի) բնօրինակը կամ պատճենը՝ «Բնօրինակի հետ ճիշտ է» մակագրմամբ:
8. Կազմակերպությունը երաշխավորի պահանջով երաշխավորությամբ ծագող հարաբերությունների ամբողջ ընթացքում տրամադրում է նրան վարկի (պարտավորության) մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն:
9. Երաշխավորության պայմանագրում կամ առանձին փաստաթղթով երաշխավորը ձեռագրով (էլեկտրոնային եղանակով երաշխավորության պայմանագիր կնքելու դեպքում՝ էլեկտրոնային եղանակով տպագրելու միջոցով) նշում է. «Ես՝ (անուն, ազգանուն/անվանում) երաշխավորում եմ (անուն, ազգանուն/անվանում) ----- --- գումարի պարտավորությունը և գիտակցում եմ, որ վերջինիս կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում ես եմ դրանք կատարելու, վատանալու է իմ վարկային պատմությունը, և հնարավոր է զրկվեմ իմ սեփական գույքից»: Ընդ որում, վերոնշյալ ձեռագրով նշումը երաշխավորը կարող է կատարել միայն այն լեզվով, որով վերջինիս տրամադրվել է երաշխավորության պայմանագիրը:

10. Այն դեպքում, երբ երաշխավորը սույն կանոնակարգի 9-րդ կետով սահմանված ձեռագրով նշումն իրականացնում է առանձին փաստաթղթում, ապա փաստաթղթի բնօրինակը մնում է Կազմակերպության մոտ, պատճենը տրամադրվում է երաշխավորին, իսկ երաշխավորության պայմանագրում իրականացնելու դեպքում՝ երաշխավորը ձեռագրով նշումը կատարում է երաշխավորության պայմանագրի բոլոր օրինակների վրա:

11. Այն դեպքում, երբ երաշխավորը ի վիճակի չէ ապահովել սույն կանոնակարգի 9-րդ մասով նախատեսված ձեռագրով նշում կատարելու պահանջը, ապա կազմակերպությունը պարտավոր է ապահովել այդ պահանջի կատարումը այլ եղանակներով (օրինակ՝ տեսաձայնագրություն)՝ պահպանելով փաստն արձանագրող հիմքերը պայմանագրի ժամկետը լրանալուց հետո առնվազն հինգ տարի:

12. Կազմակերպությունը երաշխավորի հետ հաղորդակցվում է հետևյալ կարգով.

1) Երաշխավորի հետ հաղորդակցումը կատարվում է գրավոր ձևով:
2) Կազմակերպությունը երաշխավորին տրամադրում է գրավոր հաղորդակցման առնվազն երեք եղանակի ընտրության հնարավորություն (ընդ որում՝ Կազմակերպության տարածքում տեղեկատվության առձեռն հանձնման եղանակը չի կարող լինել միակ հաղորդակցման եղանակը) և բացատրում ընտրված միջոցով հաղորդակցման էությունը: Իսկ սույն կետի 3-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունը Կազմակերպությունը երաշխավորին հայտնում է վերջինիս կողմից ընտրված հետևյալ եղանակներից որևէ մեկով՝ կարճ հաղորդագրության (sms) և (կամ) էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:
3) Վարկառուի՝ մարման ժամանակացույցով սահմանված պարտավորության կատարման օրից առնվազն 1 օր առաջ Կազմակերպությունը պարտավոր է երաշխավորին ծանուցել մարման ենթակա պարտավորության առկայության մասին:
4) Կազմակերպությունը երաշխավորին ուղարկում է առաջարկ կամ ծանուցում երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրերի էական պայմանների փոփոխությունների (տոկոսադրույք, միջնորդավճար, տույժ, տուգանք, ժամկետ, վարկի չափ և այլն) մասին, որը պարունակում է տեղեկատվություն էական փոփոխությունների, տվյալ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետների, իսկ օրենսդրությամբ երաշխավորի կողմից համաձայնության ստացման անհրաժեշտության դեպքում՝ նաև՝ համաձայնեցման ձևաչափերի, ինչպես նաև չհամաձայնվելու հետևանքների մասին: Ընդ որում՝

ա) Այն դեպքում, երբ Կազմակերպությունը ցանկանում է փոփոխել պայմանագրերի այն էական պայմանները, որոնց արդյունքում վատթարանում են պայմանագրի պայմանները, և (կամ) ավելանում է պարտավորությունը, և երաշխավորը նախապես չի տրամադրել դրանց փոփոխության վերաբերյալ համաձայնություն, ապա Կազմակերպությունը առնվազն 7 աշխատանքային օր առաջ երաշխավորին տրամադրում է այդ փոփոխության վերաբերյալ առաջարկ:

Ներկայացուցչական օրինակ 1՝ «Հարգելի երաշխավոր, Կազմակերպության և վարկառուի միջև ձեռք բերված համաձայնությամբ ***15.04.2019*** թ-ից նախատեսվում է փոփոխել երաշխավորությամբ ապահովված պարտավորության ***տոկոսադրույքի չափը*** (14%-ից դառնում է 16%) և ***ժամկետը*** (երկարացվում է երկու ամսով, մարման ավարտը՝ 20.01.2020-ի փոխարեն 20.03.2020): Եթե Դուք ***համաձայն եք,*** անհրաժեշտ է մինչև 14.04.2019 թ. ներկայանալ կազմակերպություն և գրավոր եղանակով տալ Ձեր համաձայնությունը: Եթե Դուք համաձայն չեք այդ փոփոխությանը, և փոփոխությունը տեղի է ունեցել, ապա, օրենսդրության համաձայն, փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո Ձեր կողմից տրամադրված երաշխավորությունը դադարում է, իսկ եթե Դուք համաձայն չեք, և փոփոխությունը չի իրականացվել պայմանագրում, ապա շարունակում են գործել Ձեր երաշխավորությամբ ապահովված պայմանագրի դրույթները»:

բ) Այն դեպքում, երբ Կազմակերպությունը նախատեսում է փոփոխել պայմանագրի այն էական պայմանները, որոնք չեն նախատեսում պայմանագրի պայմանների վատթարացում և (կամ) պարտավորության ավելացում, ապա Կազմակերպությունը փոփոխության վերաբերյալ ծանուցում է երաշխավորին փոփոխությունը հաստատվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Ներկայացուցչական օրինակ 2՝ «Հարգելի երաշխավոր, Կազմակերպության և վարկառուի միջև ձեռք բերված համաձայնությամբ ***15.04.2019*** թ-ից փոխվելու է Ձեր երաշխավորությամբ ապահովված պարտավորության ***տոկոսադրույքի չափը*** (14%-ից դառնալու է 12%)»:

գ) Այն դեպքում, երբ Կազմակերպությունը նախատեսում է փոփոխել պայմանագրերի այն էական պայմանները (այդ թվում՝ երբ նախապես տրամադրված երաշխավորության պայմանագրի շրջանակում կնքվում են լրացուցիչ համաձայնագրեր), որոնց երաշխավորը նախապես տրամադրել է համաձայնություն, Կազմակերպությունը յուրաքանչյուր անգամ երաշխավորին ծանուցում է այդ փոփոխությունների մասին փոփոխությունը հաստատվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Ներկայացուցչական օրինակ 3՝ «Հարգելի երաշխավոր, Ձեր կողմից տրամադրված երաշխավորության պայմանագրի շրջանակներում և պայմանների համաձայն՝ Կազմակերպության կողմից 15.04.2019 թ-ից փոխվելու է Ձեր երաշխավորությամբ ապահովված պարտավորության տոկոսադրույքի չափը (14%-ից դառնալու է 16%)»:

5) Այն դեպքում, երբ տեխնիկածրագրային սահմանափակումներից ելնելով (օրինակ՝ կարճ հաղորդագրության նիշերի սահմանափակում)՝ անհնար է ներկայացնել սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված ներկայացուցչական օրինակները, կազմակերպությունը երաշխավորին տեղեկացնում է փոփոխությունների, հետագա գործողությունների մասին՝ նշելով, թե ինչ հեռախոսահամարով կամ կապի այլ միջոցներով կարելի է իմանալ մանրամասների և հետագա գործողությունների մասին:
6) Կազմակերպությունը երաշխավորին ծանուցում է նաև երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրի դադարեցման մասին դրա դադարեցումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:
7) Պարտապանի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության կետանցի դեպքում Կազմակերպությունը պետք է երաշխավորին տեղեկացնի այդ մասին ոչ ուշ, քան կետանցի հաջորդ օրը՝ նշելով ընդհանուր պարտավորության մնացորդի չափը և դրա բացվածքը՝ առանձին պարտավորության մայր գումարը, տոկոսները, տույժերը, տուգանքները (առկայության դեպքում):

13. Կազմակերպության կողմից երաշխավորին իր պարտավորությունը կատարելու համար պահանջ ներկայացնելու դեպքում պահանջը պետք է նախատեսի այն ժամկետը, որի ընթացքում երաշխավորը պարտավոր է վճարել երաշխավորված գումարը, ընդ որում՝ այդ ժամկետը չի կարող 7 աշխատանքային օրից պակաս լինել:»:

Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2019 թվականի երրորդ եռամսյակ)*

Նպատակ ունենալով ամրապնդել բանկային համակարգի ֆինանսական կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 54. 1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
23 հոկտեմբերի 2019 թ., N 163-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հոկտեմբերի 15-ին (ՀՀԳՏ N27 (663), 06.11.2019):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու թ յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 74

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 78

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 83

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 84

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 94

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 114
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 124
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 126
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 134
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2019 թ. սեպտեմբեր*	*2019 թ. սեպտեմբերի իրական աճի փոփոխությունը 2018 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2019 թ. հոկտեմբեր*	*2019 թ. հոկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2018 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		7.5		7.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	184309.1	11.0	198954.6	2.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	43593.7	4.2	44474.0	5.1
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	291601.8	7.5	288510.7	10.2
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	192477.5	15.1	193416.4	12.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	642.9	9.3	603.0	-7.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	220531.0[1]	9.1[2]	223809.0[3]	7.5[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2019 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.8	-0.3	-3.3	4.5
Փետրվար	0.6	1.6	4.1	-2.8
Մարտ	0.1	0.7	-3.0	-0.9
Ապրիլ	-0.1	-3.5	1.7	-2.7
Մայիս	-0.4	-0.7	-0.7	-7.0
Հունիս	-1.9	-1.0	-0.3	-11.6
Հուլիս	-1.9	-0.1	0.5	-11.3
Օգոստոս	-0.4	1.4	-0.5	-14.9
Սեպտեմբեր	0.2	1.4	0.3	-4.4
Հոկտեմբեր	0.6	-0.9	0.2	5.1
2019 թ. հունվար – հոկտեմբերը 2018 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ	1.6	0.5	-2.3	-5.3

ԳՆԱՃ

Ժամանակաշրջան	2017	2018	2019
Նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.6	2.8	1.8
Փետրվար	-0.9	-0.5	0.6
Մարտ	-0.3	0.1	0.1
Ապրիլ	1.0	-0.3	-0.1
Մայիս	-0.2	-1.0	-0.4
Հունիս	-0.9	-1.6	-1.9
Հուլիս	-2.6	-1.2	-1.9
Օգոստոս	-0.4	0.6	-0.4
Սեպտեմբեր	0.2	0.3	0.2
Հոկտեմբեր	0.8	0.1	0.6
Նոյեմբեր	2.0	1.0	
Դեկտեմբեր	1.5	1.5	
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-0.6	2.9	0.8
Փետրվար	-0.2	3.3	1.9
Մարտ	-0.1	3.7	1.9
Ապրիլ	1.2	2.4	2.2
Մայիս	1.6	1.6	2.8
Հունիս	1.1	0.9	2.5
Հուլիս	0.9	2.3	1.7
Օգոստոս	0.9	3.3	0.6
Սեպտեմբեր	1.0	3.5	0.5
Հոկտեմբեր	1.2	2.8	0.9
Նոյեմբեր	2.2	1.8	
Դեկտեմբեր	2.6	1.8	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

Անվանում	2019 թ. հոկտեմբերը 2018 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**0.9**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	0.0	0.00
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	4.7	0.21
Հագուստ և կոշիկ	2.2	0.09
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.1	0.18
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	0.0	0.00
Առողջապահություն	1.6	0.12
Տրանսպորտ	2.4	0.20
Կապ	-0.1	-0.01
Հանգիստ և մշակույթ	-1.1	-0.02
Կրթություն	3.7	0.05
Ռեստորաններ և հյուրանոցներ	2.1	0.04
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.5	0.03

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ [5,6]

ժամանակաշրջան	2017	2018	2019
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.0	0.3	-0.2
Փետրվար	0.0	0.2	0.1
Մարտ	0.2	0.1	0.1
Ապրիլ	0.4	-0.1	0.0
Մայիս	0.2	-0.2	-0.1
Հունիս	0.0	-0.3	0.0
Հուլիս	-0.1	-0.3	-0.2
Օգոստոս	0.4	0.3	0.1
Սեպտեմբեր	0.4	0.8	0.2
Հոկտեմբեր	0.8	0.8	0.1
Նոյեմբեր	0.7	0.2	
Դեկտեմբեր	0.3	0.0	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-1.6	4.3	1.2
Փետրվար	-1.2	4.6	1.0
Մարտ	-0.9	4.3	0.9
Ապրիլ	-0.3	3.7	0.7
Մայիս	0.3	3.2	0.7
Հունիս	0.7	2.8	0.8
Հուլիս	0.9	2.5	0.8
Օգոստոս	1.3	2.4	0.7
Սեպտեմբեր	1.6	2.7	0.6
Հոկտեմբեր	1.9	2.5	0.2
Նոյեմբեր	2.8	1.8	
Դեկտեմբեր	3.3	1.5	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2019 թ. հոկտեմբերը 2018 թ. հոկտեմբերի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**0.2**	
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	4.4	0.19
Հաց ցորենի, բարձր տեսակի	3.9	0.19
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	8.6	0.07
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	8.6	0.07
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ	11.8	0.06
Ծխագլանակներ ֆիլտրով՝ այլ երկրների արտադրության	6.8	0.06
Ալյուր ցորենի, բարձր տեսակի	3.8	0.04
Բարձրագույն կրթության հաստատությանը վճարված ուսուցման վարձը	4.5	0.04
Օղի հայրենական արտադրության	8.1	0.04
Պանիր տնական	-8.5	-0.05
Բենզին	-10.0	-0.06
Կարագ սերուցքային	-5.8	-0.07
Բուսական յուղ արևածաղկի	-7.8	-0.08
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	-14.0	-0.09
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	-5.9	-0.21

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվանում	2019 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2019 թ. հունվար – սեպտեմբերը 2018 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)	2019 թ. հունվար – հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2019 թ. հունվար – հոկտեմբերը 2018 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	1909.2	107.9	2145.1	107.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	3730.4	104.7	4272.8	106.2
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1821.2	101.6	2127.7	105.2

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2018 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	96745	59611	37134	866588	385600	480988
ԱՄՆ	20668	15528	5141	175565	152084	23481
Ուկրաինա	879	1087	-208	8013	11941	-3928
Ղազախստան	2459	302	2158	25808	2769	23039
Գերմանիա	3287	2518	769	34483	37908	-3425
Իսպանիա	1309	1735	-425	10263	13252	-2989
Ֆրանսիա	3041	916	2125	40820	11585	29235
ԱՄԷ	2447	1830	617	19495	19769	-275
Չինաստան	223	5134	-4911	3213	46565	-43351
Թուրքիա	172	1101	-929	1807	8452	-6645
Այլ երկրներ	45222	31556	13666	269528	260950	8578
Ընդամենը	**176453**	**121316**	**55136**	**1455582**	**950875**	**504708**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	96678	29177	67501	861312	318282	543031
ԱՄՆ	27677	17213	10464	227890	251503	-23614
Ուկրաինա	1355	1484	-129	10294	12376	-2082
Ղազախստան	3213	551	2662	24567	4209	20357
Գերմանիա	4222	10657	-6435	33963	35359	-1396
Իսպանիա	917	2284	-1366	9266	15278	-6012
Ֆրանսիա	3347	1688	1659	27733	13744	13989
ԱՄԷ	1970	2900	-930	19385	18637	749
Չինաստան	238	5109	-4871	3295	47294	-43999
Թուրքիա	214	1168	-955	1825	8740	-6915
Այլ երկրներ	41563	40080	1483	363527	454134	-90608
Ընդամենը	**181394**	**112312**	**69082**	**1583058**	**1179557**	**403501**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2018 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	46914	28904	18010	418367	186080	232287
ԱՄՆ	10023	7528	2494	84726	73379	11347
Ուկրաինա	426	527	-101	3865	5758	-1893
Ղազախստան	1193	146	1047	12450	1335	11114
Գերմանիա	1593	1221	372	16640	18290	-1650
Իսպանիա	634	841	-207	4952	6393	-1441
Ֆրանսիա	1475	444	1030	19650	5587	14063
ԱՄԷ	1186	887	299	9407	9536	-128
Չինաստան	108	2490	-2382	1550	22471	-20921
Թուրքիա	83	534	-450	872	4080	-3207
Այլ երկրներ	21937	15302	6635	130088	125888	4200
Ընդամենը	**85573**	**58825**	**26748**	**702568**	**458798**	**243771**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2019 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	46052	13898	32154	413547	153338	260210
ԱՄՆ	13183	8198	4985	109521	120691	-11170
Ուկրաինա	645	707	-61	4941	5947	-1005
Ղազախստան	1530	262	1268	11798	2023	9774
Գերմանիա	2011	5077	-3066	16325	16957	-632
Իսպանիա	437	1088	-651	4457	7340	-2883
Ֆրանսիա	1594	804	790	13330	6608	6722
ԱՄԷ	938	1382	-443	9309	8944	364
